№ 10 (130) XII ՏԱՐԻ ՀՈԿՏԵՄԲԵՐ 1902

„Droschak"
ORGANE
de la Fédération
Révolut. Arménienne.

ԴՐՕՇԱԿ

Adresse:
RÉDACTION DU JOURNAL
„Droschak"
GENÈVE (Suisse)

„ՀԱՅ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ" ՕՐԳԱՆ

ԹԻՒՐՔԻԱՅԻ ՈՒԹԸ

Աւելորդ է, կարծում ենք, երկար կանգ առնել այն հանգամանքի վրայ, թէ Թիւրքիան զուրկ է այն ներքին ուժից, որը հիմք է բոլոր քաղաքակիրթ երկիրների անկախ գոյութեան:

Թիւրքիան չ'ունի ոչ միւռոյլ, կամ գոնէ մեծամասնութիւն կազմող մի ազգութիւն, ոչ կուլտուրական բարձրութիւն՝ առաջադիմելու և օտարների հետ մրցելու համար, ոչ հասարակական կարիքների մասին հոգ տանող վարչութիւն:

Շնորհիւ այդ վերջում գոյութիւն ունեցող վարչական սիստէմին՝ նայել Ժողովրդի վրայ իբրև մի կաթնատու կովի, որից միմիայն օգտւում են տուրքերի, կաշառքների, մենաշնորհների, կողոպուտների միջոցով, առանց փոխարէնը ոևէ բան տալու — արդիւնաբերութիւնը այնտեղ չի զարգանում, ազգաբնակութեան նիւթական վիճակը չի բարւոքւում. քրիստոնեաներից յետոյ, սկսել են գաղթականութեան դիմել և մահմէտականները՝ տաճիկներն ու քրդերը: Աւելի ևս. Թիւրքիայում չի նկատւում ազգաբնակութեան բնական աճում, որ ճակատագրական պիտի հետևանք կուլտուրապէս յետ մնացած երկիրների համար:

Բայց, քանի որ համարեա բոլոր հարևան երկիրներում գոյութիւն ունեն հակառակ պայմաններ, բնականաբար տարեց տարի աւելանում է հարևանների ուժը, մեծանում է նրանց կուլտուրական, տնտեսական և քաղաքական ազդեցութիւնը Թիւրքիայի վրայ:

Չը նայած այդ բոլորին՝ „հիւանդ մարդը" շարունակում է պահպանել իր գոյութիւնը և սպառնում է կարծես դեռ երկար շարունակել...

Հանրածանօթ ճշմարտութիւն է, որ մեծ դեր են խաղում այդտեղ եւրոպական պետութիւնների ունեցած տարբեր շահերը, նրանց մրցակցութիւնը միմեանց հետ, որից գիտեն օգտւել օսմանեան պետութեան վարիչները...

Այնուամենայնիւ, սուլթանների գոյութեան ամենաուժեղ նեցուկը դա չէ:

Ներքուստ փտած Թիւրքիան անկարող կը լիներ պահպանել իր քաղաքական գոյութիւնը և առանց եւրոպական դիպլոմատիայի համաձայնութեան, եթէ նրա լծի տակ հեծող տարրերը հասկանային միմեանց, համաձայնէին իրենց ընդհանուր պահանջների վերաբերմամբ և գործէին միասին ձեռք ձեռքի տուած:

Եւ ճիշդ՝ ո՞վ է պաշտպանում իրապէս Թիւրքիայի ներկայ կացութիւնը.—Ոչ ոք: Ոչ ոք, որովհետև պետութեան հիմք չեն կարող կազմել անկիրթ, խառնիճաղանճ ազգութիւններ, ռոճիկի համար ծառայող մի բուռը պաշտօնեաների հետ միասին: Միւս բոլոր կենսունակ տարրերը դէմ են Թիւրքիայի ներկայ քաղաքական կացութեան: Դէմ են և՛ Թիւրք փոքրամասնութեան հասկացող, քիչ շատ մաքուր տարրերը և ոչ-Թիւրք մեծամասնութեան բոլոր տարրերը՝ քրիստոնեայ հայերը, մակեդոնացիները, մարոնիտները, յոյները, մահմէտական ալբանացիները, արաբները, նոյնիսկ քրդերը:

Բոլորը դէմ են Թիւրքիայի արդի կացութեան, բայց... այդ դէմ լինելը արժէք չունի, որովհետև նրանք դէմ են զատ զատ, առանց միմեանց հասկանալու, առանց մէկ նպատակ ունենալու: Ահա այս անհամաձայնութեան շնորհիւ է, որ Թիւրքիան պահպանել է իր գոյութիւնը. սրա մէջն է կայանում նրա դիմացկանութեան ուժը:

Արաբներին նա ճնշել է ալբանացիների միջոցով, ալբանացիներին արաբների: Կոտորել է հայերին, երբ լուռ են եղել միւսները. ջարդել է յոյներին, երբ լուռ էին մակեդոնացիները, իսկ այսօր կոտորում է վերջիններիս, որովհետև լուռ են միւսները: Դրանց բոլորին, ինչպէս մի քանիսին միաժամանակ ճնշել տաճիկը կը դժւարանար, անկարող կը լիներ, բայց առանձին-առանձին նա կարողացել է և կը կարողանայ նոյնպէս և ապագայում: Նամանաւանդ դա յաջողւում է նրան այն դէպքում, երբ խնդիրը վերաբերում է Թիւրքիայի մի առանձին, մի ազգութեան: Մեծ պետութիւնների մէջ միշտ գտնւում են մէկ-երկուսը, որոնց շահերը հակառակ լինելով այդ անկիւնի շահերին, թև են տալիս Թիւրքիային:

Բոլորովին այլ դրութիւն կ'ըստեղծւի, երբ յաջողւի կապել միացնել Թրքական լծի տակ հեծող ազգութիւններից մի քանիսին, երբ ապստամբութիւնը պայթի երկրի զանազան անկիւններում: Կիսատոմած, ոտաբոբիկ տաճկաց զօրքերը անկարող կը լինեն արագ կերպով մարել վառւող կրակը. կը թուլանայ դիպլոմատների հակակշռական ուժը և „հիւանդ մարդը" վերջ կը տայ իր գոյութեան: Օսմանեան պետութիւնը կամ կ'ոչնչանայ քաղաքականապէս, կամ կը վերածւի մի նոր, արդարացի քաղաքական կազմի, ֆէդերալիստական հողի վրայ, որը կ'ապահովէր աշխատանքի և արդիւնաբերութեան շահերը, որը միջոց կը տար բոլոր ազգութիւններին

զարգանալ և պահպանել իրենց ազգային գոյութիւնը։

Դժբախտաբար, մենք դեռ հեռու ենք այդ ցանկալի օրերից։ Մակեդոնիայի այսօրուայ ապստամբութիւնը մի նոր ապացոյց է դրան։

Ապստամբութիւնը ծագելու հէնց առաջին օրուանից հակակրական նշաններ սկսեցին ցոյց տալ ոչ միայն „խաղաղութեան“ սիրահար մեծ պետութիւնները, այլև բոլոր հարևան փոքրիկ երկիրները՝ Յունաստանը, Սերբիան, Ռումանիան։

Դրանք բոլորը դէմ են մակեդոնական շարժման, վախենալով մի գուցէ Մակեդոնիան միացնի Բուլգարիային և խախտէ „հաւասարակշռութիւնը“ Բալկանեան թերակղզում։ Բացի դրանից, դրանց բոլորը ունի և մի այլ աւելի խոր երկիւղ, այն է որ Մակեդոնիայի և Բուլգարիայի միացումը կը կլանէ այդ շրջանում ապրող յոյներին, սերբերին, կուցո-վալախներին։

Այսպիսով „մակեդոնական“ խնդրի լուծումը „հայկական“ խնդրից ոչ պակաս դժուարութիւնների է հանդիպում։

Այդ ծանր դրութիւնից դուրս գալու համար է, որ վերջերս առաջ եկաւ Մակեդոնիայում նոր յեղափոխական կազմակերպութիւն (գլխաւորապէս Մակեդոնիայում գոյութիւն ունեցող մարմիններից), որը իրեն նշանաբան ընդունելով „Մակեդոնիան մակեդոնացիներին“, որոշեց հեռու պահել այդ վայրը շահ ունեցող հարևան փոքր և մեծ պետութիւնների քաղաքական կաւածաղիկ դառնալուց։ Եթէ սրան աւելացնենք և այն, որ նոր կօմիտէն պահանջում է կատարեալ հաւասարութիւն Մակեդոնիայում ապրող ազգութիւնների լեզուի, կրօնի, քաղաքական իրաւունքների վերաբերմամբ—մենք կըստանանք մի այնպիսի ծրագիր, որը միակ իրագործելին կարող է համարուել Տաճկաստանի գլխաւոր վայրերի համար։

Այդ ծրագրի կողմնակից է եղել Հայ Յեղափոխական Դաշնակցութիւնը իր ամբողջ գոյութեան ընթացքում։

Լայն ինքնավարութիւն և ազատութիւն ներքին գործերի նկատմամբ բոլոր ազգայնական շրջանների համար, հաւասարութիւն բոլոր այդ շրջաններում ապրող ազգութիւնների համար և „բաց դռներ“ ու չէզոք դիրք հարևան պետութիւնների վերաբերմամբ — ահա այն հիմքերը, որոնք միայն կարող են ապահովել Թիւրքիայում ապրող ազգութիւնների ապագան և որոնց իրագործումով միայն կարող է դեռ ևս պահպանել իր գոյութիւնը օսմանեան պետութիւնը։

Միդհաթ փաշայի սահմանադրութիւնը կամ նրա նման „Երիտասարդ Թիւրքերի“ պահանջած այլ *կեդրոնական, միատեսակ օրէնսդրութիւնը* չեն կարող վերացնել արդի դժգոհութեան պատճառները։ Ու յիրաւի, սահմանել *միևնոյն* օրէնսդրութիւնը թափառական արաբի ու քրդի ինչպէս և խաղաղ, արդիւնաբեր յոյների ու մակեդոնացիների ապրած վայրերի համար, կը նշանակէ օրէնքը ստեղծել ոչ այնքան կեանքի մէջ իրագործելու համար, ինչքան բաւարարութիւն տալու ժողովրդի կեանքից հեռու կանգնած տէօրիաների։ Իրենց հասկացողութիւններով, վարք ու բարքով, կուլտուրական բարձրութեամբ այդ ազգութիւնները շատ հեռու են միմեանցից և հետևաբար կարօտ են տարբեր օրէնքների, տարբեր վարչական սիստէմների իրենց ներքին գործերում։

Առանց Թիւրքիայում ապրող բոլոր ազգերի աշխարհագրական շրջանների ինքնավարութեան, սահմանադրական Երիտասարդ Թիւրքերը համակրողներ չեն գտնի ոչ Հայաստանում, ոչ Արաբիայում, ոչ բուլգարների, ոչ ալբանացիների շարքերում։

Բողոքներին ենթակայ Թիւրքիայի բոլոր վայրերում ոչ մի կուլտուրական ազգութիւն չի կազմում ճնշող մեծամասնութիւն, որպէս զի կարելի լինէր ինկատի չառնել և ուրիշների արդարացի պահանջները։ Փոքրամասնութիւն կազմող ազգութիւնների իրաւունքների մերժումը անարդարացի և վտանգաւոր է և՛ այսօր և՛ միշտ, ոչ միայն Մակեդոնիայի, այլ և Թիւրքիայի միւս բոլոր գլխաւոր շրջանների համար։ Ահա ինչու միայն կատարեալ հաւասարութիւնը զանազան ազգութիւնների վերաբերմամբ՝ կարող է գրաւական լինել ինքնավարութիւն վայելող շրջանների խաղաղ կուլտուրական առաջադիմութեան համար։

Նոյն սկզբունքը պիտի ղեկավարէ Թիւրքիայում ապրող ազգութիւններին և արտաքին քաղաքականութեան մէջ։ Հարևան պետութիւնների քաղաքական ինտրիգներից հեռու մնալը միմիայն կ'ապահովէ այդ ինքնավար շրջանների կենսունակութիւնը. միայն չէզոքութեան շնորհիւ նրանք կը կարողանան ազատուել պատերազմների թատերաբեմ լինելուց, և, հետևաբար, ուժեղ զօրք պահելու տեղ, հնարաւորութիւն կըստանան ծախսել ժողովրդի սուղ կօպէկները նոյն այդ ժողովրդի առաջադիմութեան անհրաժեշտ կարիքների վրայ։

Միայն այս պայմաններով կարելի է բաւարարութիւն տալ և համերաշխութիւն առաջ բերել Թիւրքիայի բոլոր դժգոհ տարրերի մէջ։ Միայն այդ հողի վրայ կարող է պահպանել իր գոյութիւնը ինքը օսմանեան պետութիւնը։

Մակեդոնացիները այդ բանը հասկացան արդէն։

Յոյս ունինք, որ նոյնը կը հասկանան և ալբանացիները, և յոյները, և քրդերը և նոյնիսկ անկեղծ տաճիկ ազգասէրները։

Երբ այս միտքը տարածուի աւելի լայն շրջաններում և մենք կարողանանք կազմել բոլոր ազգութիւններից մի մեծ յեղափոխական դաշնակցութիւն, իրենց ազգային անհատականութիւնը պահպանելու հիմունքներով, այն ժամանակ կը լցուին մեր բաժանող անդունդները, կ'ոչնչանայ բռնապետական Թիւրքիայի այսօրուայ ուժը։

Մասնակի շարժումները կը վերածուին ընդհանուր ապստամբութեան և սուլթանի լծի տակ հեծող տարրերը կը դադրեն Եըլդըզ Քէօսքին ստրուկ և դիպլօմատներին՝ խաղալիք լինելուց։

ԵՒՐՕՊԱԿԱՆ ՄԻ ԽՈՐՀՐԴԱԺՈՂՈՎ ԱՐԵՒԵԼԵԱՆ ԳՈՐԾԵՐԻ ՀԱՄԱՐ

Անատօլ Լը Ռուա Բօլիօ „Լ'Եւրոպէէն"-ի մէջ հրատարակած մի ընդարձակ յօդուածի մէջ շեշտում է միջազգային մի խորհրդաժողովի անհրաժեշտութիւնը՝ արեւելեան խնդիրներին լուծում տալու համար: Քաղուածաբար առաջ ենք բերում այդ յօդուածը:

Ով որ քաջութիւն ունի անաչառօրէն դիտելու Բալկանեան երկրներում տիրող յուզումը և Թիւրք կայսրութեան ներքին խառնակութիւնները — նրա աչքում Արեւելքի վիճակը տարօրինապէս անհանգստացնող է: Այդ վիճակը չէ կարող երկար շարունակուել, առանց մատնելու Թիւրքիան, ապա ուրեմն և Եւրոպան՝ պլինւած ընդհարումների վտանգին, որոնց ծաւալն ու հետեւանքը ոչ ոք չէ կարող նախատեսնել:

Եթէ արեւելեան ժողովուրդների տառապանքները, եթէ այն անպատուութիւններն ու չարչարանքները, որոնց ենթարկւած են Մակեդօնիայի քրիստոնեաները, եթէ մի ամբողջ ժողովրդի բնաջնջման գործը, որ յամառ կերպով, առաջ է տարւում հայկական բարձրավանդակի վրայ— եթէ այդ բոլորը չէ կարող յուզել մեր եսամոլութիւնը գէթ պետական գործիչների խոհեմութիւնն ու զգուշաւորութիւնը, չպիտի անտարբեր մնային՝ հանդէպ միշտ աճող յուզմունքներին և ապստամբների կենտրոնացման Մակեդօնիայում ու Հայաստանում: Եւրոպայում, ինչպէս և Ասիայում, սուլթանը ճգնում է վերականգնել խաղաղութիւնը տէռօրի միջոցով: Թալանը, բռնաբարութիւնն ու կոտորածը դարձել են նրա վարչութեան սովորական միջոցներ՝ թէ Վարդարի ու Ստրումայի հովիտներում և թէ Վանայ լճի ափերում...

Մակեդօնիայի այսօրւան վիճակը նման է 1876 թւի Բօսնիա-Հերցեգովինայի վիճակին: Նա դեռ աւելի վատթար է, քանի որ գաւառների մէջ սուլթանի հրահանգով կենտրոնացած զօրքերը միայն բռնաբարում, աւերում ու յուսահատութեան են հասցնում դժբախտ քրիստոնեայ ազգաբնակութիւնը:

Եթէ եւրոպական դիւանագիտութիւնը չկարողանայ չարիքի առաջն առնել՝ Մակեդօնիայի հետ նոյնը պիտի լինի, ինչ որ եղաւ առաջ Բօսնիա-Հերցեգովինայի հետ: Ապստամբութիւնը այնտեղ ընդհանուր կերպարանք է ստանալու գարնանը: Բօլգարական կառավարութիւնը, ինչպէս երբեմն Սերբիան ու Մօնտենեգրօն Բօսնիայի դէպքում, ստիպւած է լինելու կամայ-ակամայ իր պաշտպանութեան տակ առնել Մակեդօնիայի քրիստոնեաներին: Սերբիան չի ուզենալու յետ մնալ Բօլգարիայից: Ռուսաստանը ևս իր կողմից, չնայած Աւստրիայի հետ կապած դաշինքին և ծայրագոյն արեւելքում ունեցած իր հոգսերին՝ չպիտի կարողանայ ձեռնպահ մնալ կռիւների դիմաց, և մանաւանդ չպիտի թոյլ տայ ոչնչացնելու իր ուղղափառ եղբայրներին: Եւ այդպիսով, շնորհիւ դիպլօմատիայի անհեռատեսութեան, կամ լաւ է ասել, շնորհիւ կառավարութիւնների անտարբերութեան ու փոքրոգութեան՝ Եւրոպան կարող է դահավիժել մի նոր Արեւելեան պատերազմի մէջ, որը աշխարհի ներկայ վիճակում կարող է դառնալ համաշխարհային մի պատերազմ:

Ահաւասիկ, անշուշտ, մռայլ հեռապատկերներ: Ով որ հետեւում է անցքերին, ով որ յիշում է պատմութիւնը՝ գիտէ, որ այդ հեռապատկերները դիտմամբ չեն սեւացրւած... Եթէ Եւրոպան չի ուզում, որ իր հանգստութիւնը խանգարւի տաճկական նահանգների մի ընդհանուր ապստամբութեամբ՝ ապա ժամանակ է, որ նա ականջ դնէ նրանց գանգատներին ու հեծեծանքներին:

Եւ ուրիշ ի՞նչ եղանակով կարող է արտայայտւել Եւրոպայի այդ ուշադրութիւնը դէպի արեւելեան դժբախտ ժողովուրդները, եթէ ոչ դիպլօմատիական մի միջամտութեամբ: Եւ եթէ ուզում են, որ այդ միջամտութիւնը ազդու, արդիւնաւոր լինի, ուրիշ ի՞նչ միջոց կայ, եթէ ոչ մի խորհրդաժողով, կամ մի կօնգրէս...

Արեւելքում, հէնց Թիւրքիայի մէջ կան բազմաթիւ խնդիրներ, որոնք կ'արդարացնէին այդպիսի մի խորհրդաժողովի գումարումը: Բերլինի դաշնագրի մի շարք էական յօդւածները մնում են մեռած տառ: Եւրոպական մէկ խորհրդաժողով միայն կարող է հսկել նրանց գործադրութեան վրայ, ինչպէս որ հէնց ինքը Բերլինի դաշնագիրն է նախատեսել:

Այդպէս որոշ, սահմանագծւած նպատակ ունենալով՝ խորհրդաժողովը չի կարող անհանգստութիւն պատճառել ոչ կառավարութիւններին և ոչ էլ խաղաղութեան բարեկամներին... Խորհրդաժողովի նպատակը կը լինի՝ լուծել այն բոլոր խնդիրները, որոնք յարուցւած են Բերլինի դաշնագրի չգործադրութեամբ...

Այդպէս, հայկական խնդիրը: Ասիական ազգերից ամենաեւրոպական ազգի արիւնաթաթախ մնացորդները փրկելու համար՝ բաւական է միայն յիշեցնել Բ. Դրան, որ նա յարգէ դաշնագրի 61-րդ յօդւածը. և քանի որ սուլթանը այդ դաշնագրով պարտաւորութիւն է ստանձնած՝ բաւական է միայն ստիպել նրան՝ պետութիւնների քննութեան ենթարկել այն միջոցները, որ նա ձեռք է առել՝ իր հպատակ հայերի ապահովութեան համար:

Նոյնը՝ Մակեդօնիայի և այն եւրոպական նահանգների վերաբերմամբ, որ Բերլինի դաշնագիրը դրել է սուլթանի տիրապետութեան տակ...

Եւրոպայի ընդհանուր դրութիւնը ոչ միայն չի կարող ընդդիմանալ այդպիսի մի խորհրդաժողովի գումարւելուն, այլ ընդհակառակը նպաստաւոր կը լինի նրան: Գլխաւոր դժւարութիւնը թերեւս այն կը լինի, թէ պետութիւնների ո՞ր համախմբումը կամ ո՞ր պետութիւնը իր վրայ կ'առնէ այդպիսի մի առաջարկի նախաձեռնութիւնը: Ինչ վերաբերում է մեզ՝ մենք — ասում ենք այդ բարձրաձայն— կը ցանկանայինք, որ այդ նախաձեռնութիւնը պատկանէր Ֆրանսիային: Այդ դերը արժանի կը լինէր նրա անցեալին և միանգամայն նրա լաւագոյն տրադիցիաներին: Եթէ ուրիշ ազգերը չհետեւէին էլ նրան՝ Ֆրանսիան ստանձնելով այդպիսի մի նախաձեռնութիւն՝ կը բարձրանար, պատուաւոր դիրք կը ստանար Արեւելքի եւ ամբողջ աշխարհի աչքում:

Մեր կառավարութիւնը՝ ծանրաբեռնւած բազմաթիւ ուրիշ հոգսերով, և գուցէ չափից դուրս կլանւած մեր ներքին կռիւներով՝ կ'ունենա՞յ արդեօք այդպիսի մի քայլ անելու կորովն ու արիութիւնը: Ճնշւած ժողովուրդների բարեկամների, արդարութեան ու մարդկայնութեան պաշտպանների պարտականութիւնն է՝ մղել նրան դէպի այդ քայլը: Նրանք բազմաթիւ են և ազդեցիկ կառավարութեան քաղաքականութեան սիւների շրջանում, և այդպիսի մի գործի համար՝ նրանք կարող են վստահ լինել, որ կ'ունենան աջակցութիւնը այն բոլոր մարդկանց, որոնք, առանց խտրութեան կուսակցութեան ու կրօնական դաւանանքի, կարծում են, որ Ֆրանսիան ունի դեռ մի առաքելութիւն Արեւելքում...

* * *

Լուռ գիշերին մտքիս դիմաց
Շա՜տ ստուերներ ժողովեան. —
Ընկերներս՝ մեռա՜ծ, կորա՜ծ,
Հոգւոյս խորքով անց կացան։

Նրանց աչքերն՝ բո՜ց ու վրէ՜ժ
Սրտիս խորքը նայեցին.
Սիրտս բաց էր խոր վէրքի պէս, —
Նրանք այնտեղ սուզւեցին։

Անհաւասար, գոռ կռւի մէջ
Ընկաք, իմ վե՜հ ընկերներ.
Ա՜խ, ձեր շիրիմն իմ սրտումն է,
Իմ վե՜հ, իմ սո՜ւրբ ընկերներ...

* * *

Սուրբ հայրենիքս երգել կ'ուզէի
Իմ երգերի մէջ հոգեբուղխ, հնչուն.
Երկնի հետ խօսող լեռներն վիթխարի.
Ու թռիչքն արծւի այն վե՜հ բարձրունքում։

Մայր-ժողովուրդս երգել կ'ուզէի.
Ցորձուտ Արաքսը չքնաղ ափերով,
Հրեղէն Նժոյգն երգել կ'ուզէի
Մասսայ լանջերում սրարշաւ տալով։

Հայ կտրիճներին երգել կ'ուզէի
Ու կռւի կոչը՝ հպարտ ու վայրի,
Սուրբ ազատութեան տօնը յաղթական.
Ու վառ ապագան իմ հայրենիքի...

Բայց կոպիտ ձեռներ
Փշրեցին սրտիս քնարը՝ բեկ-բեկ.
Բայց կոպիտ ձեռներ
Կտրեցին նրա լարերը՝ մէկ-մէկ...

ՀԱՅ-ԳՈՒՍԱՆ

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ

ՆԱՄԱԿ ԱԼԱՇԿԵՐՏԷՆ

15 օգոստոս 1902

Իսլամի օրէնքի նախաբանն է թալնել, կոտորել, խաբել, գողնալ. ուրեմն ձկայ շինել, չկայ գործել, չկայ այնտեղ բարիք, չկայ հանգիստ։ Այնտեղ կը թագաւորէ միմիայն չարիքը, ու չարիքն է միանգամայն Իսլամի Աստուածը։

Հայու աստանդական լինելն ու գաղթելը, երկրէն քոչով դուրս գալ ու մտնելը թիւրքին անհանգստացուց, ատոր համար ալ միջոցներ հնարեց ճար ու ճամբան կտրելու ցիրուցան խեղճ հայու գլխուն, որպէս զի ամէն բան կատարւած լինի, որպէս զի հայը ոչ օր և ոչ արև տեսնի իր կեանքի մէջ՝ թէ քարի վրայ, թէ սարի գըլխին, թէ քաղաքի մէջ և թէ վերջապէս ամէն տեղ։

Քիւրդերը կ'ընէին, ինչ որ պէտք էր, ոչ մէկ հայու կամ գաղթականի խաթրը չէին թողներ—կը թալնէին հաւասար կերպով, բայց այդ քրդին չմնաց, շուտով զօրքն եկաւ կոտորածէն յետոյ և սուսիկ փուսիկ տեղ շինեց իրեն համար. համոզեց քրդին, մտաւ անոր տուն և սկսեց ապրել անոր կողքին. քրդին կ'ըսէր՝ ո՛չէ ես եկեր եմ քեզ փէդայիներէն պաշտպանելու, այդ քեաֆիրներու ձեռքէն ազատելու համար, անոնք գութ չունին, կըսպաննեն քեզ ու քու երեխային. որտեղ տեսնէք հայ մը, թալնեցէք, սպաննեցէք"... Այսպէս էր եկող բոլոր զինւորական դասի քարոզը։ Քիւրդը աւելի ու աւելի կը լեցւէր կատաղութեամբ, եթէ իսկոյն չնկատէր զինւորներու վատ ընթացքը իր տան ու ընտանիքի վերաբերմամբ. ու նա այսօր խոր հառաչելով կ'ըսէ ու կը վկայէ՝ "փլահն ալ այս տեսաւ տաճկէն որ չդիմացաւ, փէդահ գարձաւ ու զէնքը մեռնելու տւաւ. մենք զէնքը ձեռքերնուս անզէն փլահի չափ ալ սիրտ չունինք, վա՜յ է եկեր մեր օրին"։

Շատ տեղեր քիւրդը մոլորւեց իր միտի մէջ. հայու գալ ու գնալէն ձեռք քաշեց, զբաղւած էր զօրքերու գալ ու գնալով, անոնց կամքը կատարելով—Դէ՛հ, Սլօ, Սալէհ բինբաշու (հազարապետ) ձին բռնէ, գարի բեր, գառ մորթեցէք, փլաւ եփեցէք, լաւ դօշակներ բերէք, բերէք հա բերէք, տօ մշակներ, չլինի անշնորհքութիւն ընէք, կը վիրաւորւի էֆէնտին, կ'երթայ հեռագիր կուտայ։ (Զինւորական դասը կ'օգտւի քրդի տգիտութենէն ու միամտութենէն, իր էշը քշելու համար հեռագիր տալու սպառնալիքով կը վախցնէ և իր ուզածը կ'առնէ կամ կը պահանջէ)։ Քիւրդը դեռ ևս չի մտածեր որ ինքն ալ ընկեր է հայու դժբախտ ճանապարհին։ Հայն ալ պառւեց, նստեցուց, վախցաւ, անոր պատւէրները կատարեց մինչև որ իր կին ու սիրելիներն ալ վրայ տւեց։ Անարդարութիւն չտեսած, արդարութիւն չեն սորվիր. քրդի զրկանք տեսնելու ժամերն հասեր է, նա կը տանջւի ու սկսեր է զգալ տանջւողի ցաւը...

Զօրքը կամաց կամաց քրդի հացն ալ ձեռքէն խլեց, գիշերով թալնեց, ցորեկով թալնեց ու կը թալնէ. դեռ ևս գաղթականներէն մէկը չեղաւ որ պատահէր զօրքին և չ'ըսէր որ չթալանւեցի։ Անոնք իրենք զիրենք վստահաբար կը յանձնեն քրդին, բայց չեն ազատւիր զօրքէն։ Բայազէտի սահմաններէն ու Պարսկաստանէն անցնող գաղթականները բոլորն ալ զօրքերուն հանդիպելով թէ թալանւեր, բանտարկւեր և թէ օրերով Բայազէտի մէջ տաժանակիր աշխատութեան մատնւեր են. և այսպէս տանջւելով գնացեր, հասեր են իրենց հայրենիք, ողջ թէ մեռած՝ յայտնի չէ։

Սահմանաբնակ զօրքը ալ միջոց չխնայեց քրդերուն գրգռելու հայերուն դէմ, բայց մինչև այժմ ի զո՜ւր գնաց. քիւրդը առելութեամբ կը լսէ անոր ըսածը և պիտի լսէ ալ. ճարը կտրած զինւորականները սահմանէն դուրս պարսիկներուն կը քարոզեն ու կը գրգռեն եկող-գացող հայերուն թալնելու ու կոտորելու. այսքան ժամանակ ոչ էս կողմէն և ոչ էն կողմէն ոչ մէկ կերպ չեն յաջողւեր թալանի աշխարհի որդիք — զօրքերը։

Թալան-թուրանի վարժւած Սալէհ էֆէնտին է այսօր ուղարկւած Մշոյ կողմերը։ Սա էր որ Պարսկասահմանի վրայ մասնակցեց 800 հայերու ջարդին, Վառ գիւղի կոտորածին ու թալանին, Տահար Խան պարսկահպատակ նշանաւոր քրդի սպանման գործին. Նոյն էֆէնտին է որ այսօր կը պատրաստւի սասունցի լեռնցիներու դէմ. քաջ Գուրգէնը Ցրօնք գիւղի մէջ ապտակ մը կերցուց և ստիպւեցաւ փախչիլ, բայց տեսնենք այս անգամ Սասնոյ քաջերէն ի՞նչ պիտի ուտէ։

Սահմանի վրայ Թաքուրցի աշիրաթի (Ընիկակի ցեղ մը) և պարսկահպատակ ու թրքահպատակ Հայդարցիներու իրար դէմ մղած կռիւն ու թալան-թուրանը վերջացաւ առայժմ. Հայդարցիները աւարեցին Թաքուրցիներու Ենգիւղ անունով գիւղը ու թալանեցին. սպաննուեց երկու կողմէն մնտաւորապէս 10 մարդ և մէկ քանի հատ ալ վիրաւորուեր են։ Հազիւ 15 օր է անցեր այդ կռուէն և ահա նորէն կը պատրաստուի աւելի մեծ թալան-թուրան ու կռուելու ծրագիր երկու աշիրէթներու միջև։

ՆԱՄԱԿ ԲԱՍԵՆԷՆ

24 սեպտեմբեր 1902

Բասենը Էրզրումի վիլայէթի քսաներորդ գայմագամութիւններից մէկն է։ Ռուս-տաճկական պատերազմից յետոյ Կարսի շրջանի բոլոր տաճիկները գաղթել են այս գաւառը, այնպէս որ այժմ բնակչութեան ճնշող մեծամասնութիւնը տաճիկներ են։ 10-15 գիւղերից հազիւ մէկը հայկական է. մի քանի գիւղեր էլ տաճկախառն են։

Աշունը մտել է, աշնանացան անելու ժամանակն է, բայց ժողովուրդը մինչև հիմա կալից չէ պրծել։ Վաղուց նա քաղել է արտերը, կալսել և վիզը ծռած՝ սպասում է, թէ երբ կը գայ միլթէզիմը իր շահնաներով բահրան առնելու. (օրէնքով ութից մէկ)։ Ամէն գիւղում նստած են մէկ, երկու կամ երեք միլթէզիմ իրենց 5-20 շահնաներով, որոնք շաբաթներով ապրում են ժողովրդի հաշուով, հաւաքում իրենց հասանելիքը և բռնութեամբ պատրաստակելով թէ, „ցորենը գողացել էք, քիչ էք ցոյց տալիս“ ստիպում են ժողովրդին տանել իրենց բնակած տեղը հասցնել։ Ամենափոքրիկ դիմադրութիւն ցոյց տուողի պատիժը պատրաստ է։ Կառավարութեան էլ եթէ դիմես, ուշ չի դարձնում, այդ լաւ գիտէ միլթէզիմը և ինքը իր ձեռքով դիմադրողի դատաստանը անում է։ Ոչ մի գիւղ բացառութիւն չի կազմում։

Վերջերս լուր է տարածուել, որ գաղթականները գալիս են և այդ առիթով շշուկ են պտտեցնում թէ ֆէդայիները արտասահմանից յարձակում պիտի գործեն։ Մի քանի գիւղեր լեցուած են զօրքով, զօրք չեղած գիւղերում շահնաները զինուորի դեր են կատարում։

Բռնութիւնները շարունակւում են։

Մի ամիս առաջ Խլաթից և Խնուսից մօտ 20 հոգի գաղթականներ, հետները մի քանի կանայք, գալիս Գոմաձորով անցնում են դէպի Ռուսաստան։ Սահմանից ոչ հեռու, Ալթնբուլաղ գեղի մօտ բռնւում են, որոնցից 11 հոգին այժմ բանտն են։ Այդ առիթով բռնուած է նաև գոմաձորցի Մանուկը, գաղթականներին գիշերելու տեղ տալու պատճառով։

Ամիս ու կէս առաջ Գոմաձոր գիւղի մօտով անցնում են 3 քիւրդ իրենց ապրանքների հետ։ Գիւղում գտնուած զինուորները չեն կարողանում բռնել նրանց և իրենց բարկութիւնը թափում են քրդերի գնացած ճանապարհի վրայ գտնուող հայ բոստանջիների գլխին։ Լաւ ծեծում են Գոմաձոր գիւղացի Դաւիթին, Քերոբին, Գէորգին, Խաչօյին։ Դրանցից Դաւիթը շատ ծեծուելուց, մի շաբաթ պառկել է։

Յուլիսի վերջերին, Հասանանցի ցեղապետ Համիդիէ Ջնդու Մուսթաֆի մարդիկը յարձակուեցին Ցոտվերան գիւղի վրայ և տարան 8՝ կով, 4 եզ և 13 ձի։ Դիմումն եղաւ կառավարութեան, սակայն վերջինս անտարբեր գտնուեց։ Ով գիտէ արդեօք իր մատը խառն չէր։

Օգոստոս ամսին Հասանանցի Աջմիօ Ռաշիտ աղայի և Զիմայդինցի Մահմէտ պէկի մարդիկը յարձակւում են Իւզվերան գիւղի վրայ և տանում 30 եզ։ Նրանցից Ռաշիտ աղան բինբաշի է, իսկ Մահմէտ պէկը գայմագամ։ Ահա ձեզ կառավարական պաշտօնեաներ։

Սրանից 4 տարի առաջ Հասանանցի Ուրզախի մարդիկը քշում են Իշխու գիւղից 400 ոչխար, կառավարութիւնը իմանալով այդ բացարձակ աւազակութեան մասին, հետապնդում է և ոչխարների տեղ, ուրիշ ոչխարներ է առնում տալիս վնասուածներին։ Ժողովրդի համար դա մի չտեսնուած իրողութիւն էր, մի հրաշք։ Երկար ժամանակ նա չէր մոռանում այդ արդար քայլը։ Սակայն, կարծես ինքը կառավարութիւնը զգաց որ այդ քայլը իրեն վայել քայլ չէ։ Եւ ահա ամսոյս 14-ին Հասանղալու գայմագամի կարգադրութեամբ, զինուորները Իշխու են մտնում և գիւղացիներից պահանջում 100 ոսկի, ասելով թէ դուք խաբել էիք մեզ, նրանք ձեր ոչխարները չէին տարել, ու առանց պատասխանի սպասելու՝ քշում տանում են գիւղի բոլոր կովերը, հորթերը ու ոչխարները։ Թողել են միայն փոքր թուով եզներ, երևի այն էլ նրա համար, որ գիւղացիք ցանեն, հնձեն, իսկ իրենք լափեն։

Կրդաբաղ գիւղացի Թումօն և Եաղանցի Պողոսը պարտական լինելով Կասկանցի քիւրդ աշիրէթ Ռաշիտ բէկին, սրանից 8 տարի առաջ մտնում են նրա մօտ ծառայութեան։ Եօթ տարուայ եգիպտական տանջանք կրելուց յետոյ, նրանք ուզում են դուրս գալ, պարտքից իրենց ազատ զգալով, բէկը թոյլ չի տալիս։ Գիւղացիները դիմել են Էրզրումի վալիին և նրանից հրաման առել, որ բէկը նրանց ազատութիւն տայ, բայց վերջինս աւելի է կատաղում, ծեծելով երկուքին էլ դուրս է անում, իր մօտ պահելով նրանց կանանց։ Եւ չկայ մէկը որից արդարութիւն պահանջեն։

Գարնանը Հասան-ղալայի թիւրքերը փախցրել էին դերձակ Էկոյեանի աղջիկը, Հէքեբատ գիւղացի Սիմոնի աղջիկն և նոյն գիւղացի Համբարձումի հարսը։ Այդ երեքն էլ մի քանի օր պահելուց յետոյ դուրս են քշել։ Քրդերի ու տաճիկ լամուկների լրբութիւնները թիւ ու համար չունին։ Ժողովրդի համբերութիւնը հատած է։

ՆԱՄԱԿ ԿԱՐԻՆԷՆ

1 հոկտեմբեր 1902

Վերջին տարիների սև օրերին ամենաշատ տուժող շրջաններից մէկն էլ Էրզրումն է իր շրջականներով։ Ժողովրդի թշուառութիւններին ու նրա անցուցած դառն օրերին ծանօթ մարդիկ ասում են, որ Էրզրումի վիլայէթը միւս տեղերի հետ համեմատած, աւելի կանոնաւոր կեանք ունի, որովհետև Ռուսաստանին սահմանակից լինելու պատճառով այնտեղ տիրում է օրինականութիւն։

Անիմաստ խօսքեր են դրանք։ Ժողովրդին ուժասպառ անող, նրան բարոյապէս ու ֆիզիկապէս մեռցնող ժանտախտը՝ տաճիկ կառավարութիւնն ու քրդերը՝ միևնոյն են ամէն տեղ,—Էրզրում լինի դա, թէ ռուսաց սահմանի մօտ գտնուող Ցանծուղը, Մշոյ դաշտը, թէ Տիգրանակերտի շրջակայ գիւղերը։

Քրդի համար աշխարհագրական տարբերութիւն չկայ. նա սպանում, թալանում է, ուր որ կարող է, ուստուծ է որ գիւղացու մօտ ուզէ, ով է նրան ձեռք բռնողը: Ահա հեռուից գալիս են մի խումբ քիւրդ ձիաւորներ, ոտքից գլուխ սպառազինուած. հայ գիւղացին նրանց նկատելիս՝ երկիւղը սրտում շտապով մօտենում է և ասպանդակը բռնում: Աղաները իջնում են և առաջնորդւում հիւրատունը: Աղա է ամէն մի քիւրդ, լինի նա մեծաւոր թէ ծառայ: Առաջ հայերը պարտաւոր էին միայն թիւրք պաշտօնեաները ընդունել, այժմ քրդերն էլ աւելացան:

Կալերը վերջանալու վրայ են: Բերքը լաւ է և տասանորդ հաւաքող տաճիկները ցնծութեան մէջ են: Դեռ արտերը չհնձած, միլթէզիմները փողով առնում են այս կամ այն գիւղը, նրանք իրենց շահներով ապրում են գիւղացիների հաշին մինչև կալերի վերջանալը, յետոյ ստիպում են նրանց իրենց հաւաքած բերքերը տանել իրենց ուզած տեղը: Այժմ տանելու սեզօնն է: Դէպի քաղաքը տանող ճանապարհները ծածկուած են սայլերի մի ամբողջ շարքով: Թէպէտ օրէնքով հրամայուած է որ միլթէզիմները և շահնաները գիւղացու վրայ չծանրանան, որ գիւղացին ձրիաբար նրանց բերքերը չփոխադրէ այս ինչ կամ այն ինչ տեղը, սակայն ով է օրէնքին նայում: Տաճկի ու քրդի ամէն մի ապօրինի վարմունք հայերի վերաբերմամբ օրինաւոր է նկատւում, իսկ հարկերի տակ ուժասպառ եղած հայի ամենաարդար, ամենաթոյլ բողոքը՝ ապստամբութեան նշան, հակակառավարչական քայլ:

Քաղաքի մէջ երկիւղը տիրում է բոլորի վրայ: Քաղաք եկող-գնացող հայերին խուզարկում են անխնայ, իսկ տաճիկներին հազարից մէկը, այն էլ ձևի համար: Երեկոյեան ժամը 6-ից մինչև արևածագը ոչ ոք իրաւունք չունի քաղաք մտնելու կամ քաղաքից դուրս գալու:

Արտասահմանից վերադարձող հայերից ոչ ոքին կառավարութիւնը ներս չէ առնում: Այստեղ շատ անհանդիստ են գաղթականների սահմանազլխում երևալու պատճառով: Լուր է տարածուել թէ զէնքով պիտի գան, թէ բոլորն էլ ֆէդայիներ են: Խե՜ղճ մարդիկ. տարիներով հայրենիքից տարագիր լինել, նրա կարօտը քաշել, ու յետոյ երբ ուզում են գալ հայրենի օջախին վրայ շունչերը փչել՝ նրանց ասում են դուք ֆէդայի էք: Էլ ուրիշ ի՞նչ կերպով տաճիկ կառավարութիւնը կարողանայ արգիլել գաղթականների մուտքը:

Սեպտեմբեր 28-ին տեղիս բանտը բերին 2 մշեցի, որոնք նոր էին եկել և ուզում էին վերադառնալ Մուշ: Երկու հոգի բռնել են Իւզվերան գիւղում և 3 հոգի էլ Դալի-բաբա գիւղում:

Այսպէս, կառավարութիւնը միացած գալան քրդերի հետ՝ անընդհատ շարունակում են ծեծ, սպանութիւն, թալան, բանտ: Ժողովուրդը լուռ տանում է այս բոլորը, սպասելով օգնութեան: Երբ է գալու օգնութիւնը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՎԻՃԱԿԸ

ՆԱՄԱԿ ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆԷՆ

10 օգոստոս 1902, Վան

Անցեալ տարիէն սկսեալ Վանի ոչ-համիդիէ աշիրէթներուն մէջ համիդիէ գրաւելու ձգտում մը երևան եկած է: Այս մասին շատեր դիմում ալ ըրած են:

Ամէն ոք կը յիշէ այն օրերը, երբ կառավարութիւնը ինքը դիմում կ'ընէր քիւրդ աշիրէթներուն զինուորագրելու: Շատեր մերժած էին կասկածելով կառավարութեան անկեղծութեան վրայ և վախնալով մի գուցէ տակաւ առ տակաւ թիւրք կառավարութեան ենթարկուելով և կարգի տակ մտնելով՝ կորսնցնեն իրենց դրեթէ անկախ վիճակը և չկարողանան առաջուան պէս շարունակել իրենց շահատակութիւնները: Սակայն երբ փորձով տեսան թէ սխալած են իրենց կարծիքին մէջ և համոզուեցան, որ համիդիէ գունդերն իրենց անուան և պաշտպանութեան շնորհիւ՝ աւելի լայն ասպարէզ գտած են ու անպատիժ կը կողոպտեն, կը թալանեն, կրսպաննեն ոչ միայն հայը, այլ նոյնիսկ թիւրքը, քիւրդը, և թէ համիդիէի կանոնագրութիւնը անոնց վրայ ոչ մէկ լուրջ պարտականութիւն չդնելէ և իրաւասութիւններ չսեղմելէ զատ, ընդհակառակն աւելի լայն միջոցներ կուտայ զինուելու և զօրանալու՝ զղջացին ոչ-համիդիէները իրենց մերժման վրայ և այժմ իրենք են որ կը դիմեն նոյն կառավարութեան իրենց ևս պաշտպանութիւն շնորհել՝ ազատօրէն կողոպտելու, զինուելու և զօրանալու և այսպիսով կայսերական կառավարութեան փառքը բարձրացնելու և իսլամական դինը պաշտպանելու: Դեռ որոշ պատասխան ստացած չեն. տաճիկ կառավարութիւնը ձգձգումներ կ'ընէ, ո՛վ գիտէ ինչ նպատակաւ:

Բոլորովին սխալ է այն լուրը թէ կառավարութիւնը կ'ուզէ համիդիէներու զէնքերը ժողվել: Ընդհակառակը նա խիստ միջոցներ ձեռք առած է որպէս զի քիւրդեր և համիդիէներ իրենց զէնքերու պաշարը շատցնեն և իրենց ունեցածը չծախեն: Այս պատճառաւ միշտ քննութիւններ կատարել կուտայ համիդիէ գունդերու մէջ, կըստուգէ անոնց զէնքերու հաշիւը և պակասը քիւրդ պէկերու վզին կը դնէ լրացնելու: Քաղաքին մէջ քիւրդերուն արգիլուած է ըստ առաջնոյն զէնքով մտնելն և այս չի նշանակեր թէ կ'ուզէ սեղմում դնել անոնց վրայ, այլ „մէկ քարով երկու ճնճղուկ զարնել": Նախ՝ ցոյց տալ թէ կառավարութիւնը չ'ուզեր քիւրդերուն երես տալ, և երկրորդ՝ այդպիսով արգիլել որ քիւրդերը չկարողանան ազատօրէն ծախել իրենց զէնքերը հայերուն: Որովհետև քիւրդը, հակառակ կառավարութեան ջանքերուն, գիտակցութիւն չունի թէ ինքը մաս կը կազմէ „կայսերական կառավարութեան" և թէ պարտական է, իբրև համիդիէ գոնէ, աշխատել անոր շահերու պաշտպանութեան. ընդհակառակը նա իր շահերը նկատի ունի միմիայն և այնչափ կը յարգէ կառավարութեան օրէնքը, որչափ ինքը շահ ունի այդ օրէնքի գործադրման մէջ:

Մի ուրիշ շահ ևս կայ, որ ոչ-համիդիէներու փափագել կուտայ կառավարութեան դիմելու: Երբ երկու աշիրէթներու մէջ կռիւ պատահի, ինչ որ սովորական է, կառավարութիւնը կ'օգնէ միշտ համիդիէ գունդերուն, իրաւացի թէ անիրաւ. օրինակ. վերջերս կերաւցի փոքր Շաքիր աղայ (ոչ-համիդիէ), որ Նորտուզի Գասրիկ գիւղ կը մնայ, կ'երթայ Փաքակեատիւկ գիւղէն հարս բերելու: Մէմէտբերանցիք (համիդիէ) կը յարձակին կերաւցիներուն վրայ. կռիւ տեղի կունենայ և մէկ քիւրդ ու երկու ձի կըսպաննուին: Կառավարութիւնը ինչպէս կերաւցիներու տրուած պաշտօնական տեղեկագիրներու հակառակ, Մէմէտբերանցիները կը պաշտպանէ: Այս օրինակին կարելի է կցել ուրիշ տասնեակ դէպքեր:

Սակայն ինչ որ ալ ըլլայ, այս ամէն հակառակութիւն-

ներ և պաշտպանութիւններ խեղճ հայերու շուրջը կը դառնան։ Թիւրքը ստեղծեց Համիդիէն հայ յեղափոխութիւնը զսպելու, քիւրդը Համիդիէ զինուորագրեցաւ հայը աւելի ազատօրէն ճնշելու համար։ Զենք գիտեր թէ որ աստիճան թիւրքը պիտի յաջողի և կամ՝ յաջողած է իր ծրագրին մէջ. միայն սա յայտնի է որ քիւրդեր հասած են իրենց նպատակին։

Ցունիսի մէջ Հաճի Իզզէթ պէկ կառավարութեան կողմէ մասնաւոր այցելութիւններ տեսաւ Մելանցի, Մարզըկցի, Թագուրցի, Շամակցի սահմանագլխի աշիրէթներուն։ Յորդորած է զանոնք ամէն ջանք գործ դնել որ ֆէդայիներ մուտք չգտնեն սահմանէն ներս և հրահանգ տուած է չթողնել իրենց շրջաններու մէջ ոևէ հայի յառաջանալը, հարստանալը և միշտ աչքի ընկնող հայերու գլխին զարնել։

Կառավարութեան ուզելովն է որ քիւրդ աշիրէթներ միշտ յարձակում կը գործեն Պարսկաստանի գիւղերուն, աւաններուն վրայ, կը թալանեն և կը կողոպտեն։ Մէմէտբերանցի Սայիտ և Շամակցի Հասան աղաներ Խոշապի գայմագամէն կըստանան իրենց հրահանգները, իսկ Մարզըկցի Շարաֆ պէկ՝ Պաշգալէի միւթէսարիֆէն։ Շարաֆ իր շահատակութիւններու միշտ շարժառիթ ցոյց կուտայ ֆէդայիներ, իբր թէ անոնց է որ կը հետապնդի և ոչ աւարառութեան։

—

Ֆ է դ ա յ ի ն պատրուակ մը դարձած է ամէնքի ձեռք։ Քաղաքին մէջ պահանջ ունիս թիւրքէ մը—չի տայ, կը հայհոյէ „դուն ֆէդայի ես“ ըսելով։ Գիւղերու մէջ զապթիէն աչք կը նետէ կնոջդ. հարկահաւաքը անարդար պահանջումներ կ'ընէ, փոխանակ 7-էն մէկ, 5-էն մէկ կը պահանջէ գապչըմալը. կ'ընդդիմանաս, իրաւունքներդ պաշտպանել կ'ուզես, կը զարնէ գլխիդ. „դեավուր, ֆէդայի ես“ կը գոչէ, և դու բանտերու մէջ ֆէդայի ամբաստանութեամբ չմեռնելու համար՝ պարտաւորուած ես լռել։ Քիւրդը ազատօրէն կը կողոպտէ ֆէդայի պատրուակին տակ։ Դատարանի մէջ դատդ կը կորսնցնես նոյն պատճառաւ։

Դեռ այս օրերս Տէր-Պողոսեան անուն մի հայ 2 ոսկի պարտամուրհակի մը համար բողոքած էր կոմսար Նուրի էֆէնտիի որդւոյն դէմ։ Մուրհակը Նուրիի ստորագրութիւնը կը կրէր Տէր-Պողոսեանի հօր անուն վրայ։ Երկուքն ալ տարիներ առաջ սպաննուած են յեղափոխականներէ. թիւրքը իր գաղանութիւններուն համար, իսկ հայը՝ Նուրիի տէրօրիստները գտնելու նպատակով կառավարութեան օգնած լինելուն համար։ Նուրիի տղան դատարանի մէջ կ'ըսէ. „մուրհակը կեղծ է, ինձ ամբաստանողը ֆէդայի է. անոնք իմ՝ հայրս սպաննեցին, կնիքը այս մարդու հօր ձեռք անցած է և մուրհակը պատրաստած“։ Նախագահը ժպիտով մը կը հարցնէ. „միթէ՞ Տէր-Պողոսեանի հայրն ալ ֆէդայի էր“. „այո, նա ալ իմ՝ հայրը սպանողներէն է“։ Երբ այսքան թրքամոլ հայու մը համար այսպէս կ'ըսեն, երևակայեցէք ինչեր պիտի չ'ըսեն քիչ շատ պատւախնդիր և ազգային զգացում ունեցողներուն։

—

Կառավարութիւնը ոչ մի առիթ չի կորսնցներ հայերու նիւթական և բարոյական զարգացումը կասեցնելու համար։ Արդէն ամբողջ տարին հայը տուրք տալէն աչքը չի կարող բանալ, կուտայ անհաշիւ, կուտայ աչ ու ձախ. ոչ իր պարտքը կը լմնայ և ոչ ալ փայտը իր գլխէն կ'իջնէ։ Այս ամառ նոր ցաւ մը ալ աւելցած է. այդ գիւղերու տասանորդի վաճառման խնդիրն է։ Ըստ օրինի իւրաքանչիւր գաւառի կեդրոնատեղին աճուրդի պէտք է դրուի գիւղերու տասանորդներն։ Երբ արմտիք սուղ են, թիւրք, քիւրդ, հայ հարուստներ, վաշխառուներ գիշատիչ ագռաւներու նման իրար ձեռքէ կը յափշտակեն գիւղերն, որովհետև վստահ են, որչափ սուղ առնեն կրկին չեն վնասուիր, քանի որ ինչպէս ալ լինի, կարող են գիւղացիի քամակէն հանել, նա մանաւանդ կապալառուներու մեծագոյն մասը կառավարութեան պահանջատէրերն ըլլալով՝ իրենց պահանջի հաշուոյն կը գնեն գիւղերը։ (Պէտք չէ մոռնալ զի հայ կապալառուներ միշտ 1 կամ 2 թիւրք ընկերներով է որ կապալ կը վերցնեն, այլապէս անկարելի է)։

Այս տարի արմտիք անհամեմատ աժան են, կառավարութիւնը կ'ուզէ հին գնով ծախել, իսկ կապալառուներ չեն մօտենար։ Անշուշտ մուկերու բոյն պիտի չդառնայ կառավարութեան առանց այն ալ դատարկ գանձը։ Հայ գիւղացին պատրաստ է. պէտք է իւրաքանչիւր գիւղի գիւղացիներ գնեն իրենց գիւղը՝ թանկ տարիներու գնով. վայ իրենց, եթէ հակառակել ուզեն։ Եւ ահա կըսկսի տառապանքի մի նոր շրջան. գայմագամներու շահատակութեան նոր ասպարէզ բացուած է։ Կը կանչեն գիւղերու ռէսներ. առաջարկ, ստիպում, ծեծ, բանտարկութիւն, իրար կը յաջորդեն. բողոքներու առջև կը գոցուին մեծերի ականջներ, և հայ գիւղը լքուած ամէն կողմէ՝ կ'առնէ իր վրին այս նոր պարտքն ալ, ուրկէ ազատելու համար տարիներ պէտք են, քանի որ այս տարուան իր հասոյթը եթէ ամբողջովին իսկ ծախելու լինի չէ կարող իր այս նոր պարտքը լրացնել՝ հացի էժանութեան պատճառաւ։

Կաւաշ գաւառի զարգացած և լուսամիտ (՞) գայմագամ Լուֆթի պէկ, յուլիս 10-ին կը կանչէ Նարեկ, Փայլըխներ, Մոխրաբերդ, Հիրեզ, Պատականց, Փշավանց, Ընձակ, Վառենց Գանձակ, Բելու գիւղերու ռէսներն ու անոնց խորհրդականները (իւրաքանչիւր ռէս երկու խորհրդական կ'ունենայ) և կ'առաջարկէ գիւղերը գնել։ Ամէնքն ալ կը հակառակին. գայմագամը զայրացած կը հրամայէ բանտ նետել, արգիլելով նոյնիսկ բնական պէտքի համար դուրս ելնելը։ Հայերէն մին 1 մէճիտ կ'առաջարկէ իր բնական պէտքը հոգալու համար, կը մերժեն և...

Շատերը թէ չտոկալով նեղութիւններու և թէ ոչ մէկ կողմէ արդարութիւն տեսնելու յոյս չունենալով՝ յանձն կ'առնեն և կ'ազատին, բացի Նարեկ, Փայլըխներ, Փշավանց և Մոխրաբերդի գիւղերու գլխաւորներն, որոնք լաւագոյն կը համարին նեղուիլ, տանջուիլ քան թէ թշուառ ժողովուրդը նոր պարտքերու տակ ձգել։ Գայմագամը կրակ կտրած անոնց ընդդիմութենէն, կը հրամայէ տանիլ և ճանապարհներու վրայ աշխատցնել, առանց նկատի ունենալու որ անոնցմէ ոմանք դեռ անցեալ տարի բարձակիր էին իրեն գաւառական ժողովի մէջ։ Լուֆթի պէյ մտրակը ձեռին „հայտե գեավուրլար“ ըսելով՝ կը հարուածէ և կըստիպէ հող քար կրել և կը գոչէ. „Մութլագա ալաճագսընըզ, եօգսա տայագ ալթընտա էօլաճագսընըզ“ (անպատճառ տալու էք, եթէ ոչ ծեծի տակ պիտի մեռնիք)։ Համագիւղացիներ կը դիմեն կուսակալին, որ կարևորութիւն չի տար։ Գայմագամը տեսնելով անոնց յամառ դիմադրութիւնը՝ սպառնալիքներու տակ կ'արձակէ, վրէժը ուրիշ կերպ առնելու մտադրութեամբ։

Յուլիս 21-ին, Նիւֆուս քեսթիպի Ալի էֆէնտին և պէօլիւք էմինի Սիւլէյման էֆէնտին կը ղրկէ Նարեկ և Փայլիներ՝ խոտի տասանորդը ժողվելու, թէև օրէնքով պէտք էր դաւառական ժողովէն հայ և թիւրք պաշտօնեայ մը կատարեն այդ պաշտօնը։ Խոտի հունձի յաջող տարիներ այդ գիւղերու տասանորդներ 1,000 ղուրուշէն վեր բարձրացած չէ, սակայն այս տարի հակառակ հունձքին միջակութեան՝ իւրաքանչիւր գիւղէն 7,000 ղրշ. կը պահանջեն, առանց բարդերը համրելու և կշռելու։ Գիւղացիներ կրկին կը հակառակին։

Գիշերուան ժամը 6-ին Նարեկ կը կանչեն Փայլիներու ռէս Պետրոսը իր խորհրդականներով և կը հրամայէ ընդունել իրենց համար որոշուած ցուցակը, կնքել և վճարել։ Ռէս և ընկերներ կընդդիմանան. զապթիէներ բերելով կը յարձակին վրանին, չարաչար կը ծեծեն, ռէսի ծոցէն գիւղի կնիքը բռնութեամբ հանելով կը կնքեն և „հայտէ շիտի կիտինըզ, գեպվուրլար“ ըսելով ազատ կը թողնեն։ Ալի էֆ. աքացիով կը զարնէ ռէսի կողին և ոսկորը կը վնասէ. ռէսը հիւանդ է այժմ։ Նոյն ծրագրով կը վարին Նարեկ, Փշավանց և Մոխրաբերդ գիւղերու հետ։ Վերոյիշեալ գիւղերու ռէսներ և գիւղացիներ, թողած իրենց կալուկու

շէյխեր և հէնց նոյն ինքն կառավարութիւնն են. ահա այսօր է որ վերոյիշեալներու կողմէն ճիգեր ու եռանդուն ջանքեր չեն խնայուիր խլրտում ձգելու ամբոխին մէջ, ընդհարում առաջ բերելու համիդիէներուն մէջ։

Ահա ցեղապետ մը՝ բռնակալի անկուսպ հակումներով վառուած, որ չ'ուզեր իր քով իրմէն ուժեղ կամ իրեն հաւասար ուրիշ մը տեսնել։ Իսկոյն կը գրգռէ ամբոխը անոր դէմ, կը հրամայէ իր մարդիկներուն սպաննել զայն։ Երկու կողմերն ալ կը կուին, կը ծեծկուին, շատ անգամ տուժողը դարձեալ հայը կ'ըլլայ։

Ահա շէյխ մը՝ կրօնական ու ցեղական ատելութեամբ լեցուն, որ իր ախոյանին ոչնչացումը կը փափագի։ Մարդիկներ իրարու կը զարնուին, զէնքեր կը շառաչեն, դաշյիններ կը շողան ու վերջը անմեղ արիւններ կը հոսին։

Ահա վերջապէս լիրբ ու անպատկառ կառավարութիւն մը, կասկածամիտ, յիմար սուլթան մը, որ իր ու իր աշխարհի համար սոսկալի ցաւ կը կարծէ հպատակներուն սէրն ու միութիւնը և իր բոլոր ճիգովն ու քըրտինքովը փոխադարձ ոխ ու ատելութիւն առաջ բերել կը ջանայ։ Այսպէս ուրեմն, ցեղապետ, մոլլա ու կառավարութիւն համերաշխ դաշնակցութիւն կը կազմեն ու տակն ու վրայ կ'ընեն ամբողջ երկիրը։

Այս փոքրիկ տեսութենէն յետոյ ընթերցողն ուշադրութիւնը հետևեալ դէպքերուն կը դարձնեմ։

Գարնան սկիզբը Զիլանցիք ու Հասնանցիք կուի բռնուելով՝ կանոնաւոր զօրքը միջամտեց։ Երկուստեք ընդհարման միջոցին 4 զինուոր և յիսնապետ մը զոհ կ'երթան։

Ասկէ քանի մը օր առաջ Հայդարանլի Հիւսէին փաշայի ու Ատամանլի Իբրահիմ բէկի միջև կուիւ տեղի ունեցաւ։ Ցիշեալ Հիւսէին փաշան ամբողջ Բաղնոց և իր շրջակայքը տիրելէն, անոնց հարկը, տասանորդը ու այլևայլ անտեղի տուրքեր պահանջելէն ետքը՝ կ'ուզէ տիրել նաև իր սահմանէն դուրս գտնուող գիւղերուն ու հովիտներուն։ Տարի մը յառաջ իր ցեղակիցներէն Թէլլի բէկ անուամբ մէկը կը ղրկէ յիշեալ Իբրահիմ բէկի գիւղերէն մէկի մէջ բնակելու, որպէս զի տարիէ մը յետոյ այդտեղ ևս իր սեպականութեանց մին դարձնէ։ Այս գաւառին մէջ և դուրս Հիւսէին փաշան բացարձակ սուլթան է ճանաչուած իր ցեղակիցներէն և չորրորդ բանակի հրամանատար միւշիրէն։

Սակայն այս ընդհարումը յաջող ելք մը չունեցաւ։ Երկու կողմերն ալ ու քրդերէն մաս մը, առնուազն 2,000 հոգի, տեղս հաւաքուեցան։ Միմեանց հետ ունեցած ընդհարումէն ետքը՝ դարձեալ հայերուն ճնշեցին ու պէսպէս զրկանաց ենթարկեցին։ Քիւրդ խառնիճաղանճ բազմութիւնը լեցուեցաւ հայերու տները, իւրաքանչիւր տուն 15-20 ձիաւորէ աւելի։

Ասոնք վսեմափայլ սուլթանէն արտօնուած առատ ամսականներով չէ որ իրենց ծախսերը մինչև հիմա հոգացին, այլ խեղճ ու աղքատիկ հայ գիւղացու գլխին զարնելով ու անոր իր օրական պարենէն զրկելով։ Այսօր մեր գիւղաքաղաքը կատարեալ պաշարման մէջ է. եթէ մշակ մը, բանուոր մը գործի երթայ՝ անպատճառ գանահարութեան պիտի ենթարկուի։ Գալով իգական սեռին, որպէս բանտարկեալ մը խոր զնդանի մը մէջ փակուած, արև երդիկէն միայն կը տեսնէ։

Ցուլիս ամսի մէջ Հիւսէին փաշայի և Սիփկանցի Սիւլէյման և Աւտլմաճիտ երկու եղբայրներու միջև կատարեալ ընդհարում մը տեղի ունեցաւ։

Ամէնէն առաջ Հիւսէին փաշան ատոնց ոչխարները բռնութեամբ կը քշէ կը տանի. Աւտլմաճիտ իր վեց ծառաներով իսկոյն անոնց ետևէն կ'ընկնի, բայց ձեռնունայն ետ կը դառնայ. երկրորդ անգամ երբ Հիւսէինի մարդիկը կ'երթան նոքէն բան մը բերելու՝ Սիւլէյման բէկ իր եղբայրներով ու ծառաներով անոնց առջև կ'ելնէ, քանի մը հոգի կը վիրաւորէ և երեք ռուսական հրացան ձեռքերնէն կը խլէ։ Երբ այս լուրը Հիւսէին փաշան կը լսէ՝ կը կատղի և իսկոյն Էմին և Հաճի-Թէմուր փաշաներուն կերպով մը մարդ ղրկելով օգնութիւն կը խնդրէ։ Օգնութիւնը կը հասնի և միացած բանակը՝ մօտ 2,000 ձիաւոր և 800 հետևակ, կատաղաբար թշնամւոյն վրայ կը յարձակի և երկու կողմէն ալ կըսկսի պատերազմը։ Սաստիկ կռիւ տեղի կ'ունենայ Շամ գիւղի բլուրին վրայ։ Ապա կըսկսին դառնալ Սիւլէյման բէկի գիւղին վրայ, որ մէկ քանի տուներէ կը բաղկանայ։ Պատերազմը երեք օր կը տևէ. չորրորդ օրը Աւտլմաճիտ տեսնելով որ իր եղբայրը Սիւլէյման վերջին աստիճան նեղութեան մէջ կը գտնուի՝ իր վեց ծառաներով եղբօր օգնութեանը կը փութայ, ճեղքել անցնելով թշնամւոյն ահագին բանակը։ Իր ծառաներէն չորսը կըսպաննուին և մէկն ալ կը վիրաւորուի։ Այնուհետև կռիւը մինչև երեկոյ կը շարունակուի և երբ փամփուշտին կը հատնի անձնատուր կը լինեն ըսելով. „մենք քեռ ու քրոջ որդի ենք, հերիք է մէկզմէկ սպաննենք“։ Հիւսէին փաշան այդ երկու եղբայրները և Սիւլէյման բէկի որդին գերի կը տանի և այդպիսով պատերազմն ալ կը վերջանայ։

Այդ կուէն յետոյ Սիւլէյման բէկի հօրեղբայր Համատ բէկ իր մարդիկներով Անթափ կ'երթայ և սուլթանին հեռագիր մը կ'ուղղէ, որու բովանդակութեանը թէև անտեղեակ, սակայն իմաստը, ըստ իրենց պատմածի, հետևեալն է. „Վսեմապատիւ սուլթան, շնորհիւ մարգարէին այսօր դու միահեծան տէր ու փոխանորդ ես և պաշտպան իր կրօնին ու ազգութեան։ Համայն մահմէտական աշխարհը այսօր ձեր հովանաւորութեան տակ առած՝ անխտիր և անաչառ աչօք կը հսկէք մեր վրայ, որով վայրկեան մը առանց ձեր հոգատարութեան ու խնամակալութեան չի պիտի կրնայինք ապրիլ։ Սակայն այսօր հակառակ ձեր տնօրինութեան, չհնազանդելով ձեր և մարգարէի օրինաց՝ Հայդարանցի Հիւսէին փաշան կ'ուզէ ինքը բացարձակ թագաւորել մեր վրայ։ Այսօր մեր ցեղի կայքը, ինչքը մաս մը թալնելով, մաս մ'ալ կրակի մատնելով ոչնչացրեց, և ինձմէն 20 հոգի զոհ տուաւ։ Ուստի վերջնական որոշման մը կըսպասեմ ըսելով՝ „Եթէ դուք կարգած էք յիշեալին միահեծան թագաւոր, այսուհետև այլևս ձեզ թագաւոր չպիտի ճանչնամ։ Եւ եթէ դուք էք տէր սուլթան, ուրեմն ազատեցէք ձեր նեղեալ, ճնշեալ ժողովուրդը այդ չարագործ եղեռնագործէն“։

Հիւսէին փաշան այդ բանն իմանալով իր քովի գերիները Ալ-Զաւազ կը տանի և անոնց կողմէն սուլթանին կը հեռագրէ. „մենք ուրիշ աշիրէթի հետ կը կուէինք, մեր քեռին մեր օգնութեան եկաւ և մեզ ազատելով իր տունը տարաւ“։

Այսպիսով պատերազմը վերջացաւ. Հիւսէին փաշայի մարդիկներէն 15 հոգի կըսպաննուին ու 20-ի չափ կը վիրաւորին, իսկ հակառակ կողմէն կըսպաննուին 5 և կը վիրաւորուին 4 մարդ։

Տ Ե Ղ Ե Կ Ա Գ Ի Ր

ՏԻԳՐԱՆԱԿԵՐՏԻ ԿՈՒՍԱԿԱԼՈՒԹԵԱՆ ՃԻԶՐԷ ԳԱՒԱՌԱԿԻՆ ՆԵՐՔԻՆ ՎԻՃԱԿԻՆ ՎԵՐԱԲԵՐԵԱԼ

(Պատճէն, Թիւրքերէնէ թարգմանուած)

Տեղ տալով „Դրօշակ“-ի սիւնակներունմէջ սոյն տեղեկագրին ա ն փ ո փ ո խ, մենք համամիտ չենք, հարկաւ, հեղինակի յայտնած բոլոր մտքերուն: Հիւսէյին Վեհմի էֆէնտին, որքան ալ անձնապէս բարի ցանկութիւններով տոգորուած լինի, Թիւրք պաշտօնեայ է և իբրև այդպիսին բոլորի վրայ կը նայի և ստիպուած է նայել Թիւրք պաշտօնեայի աչքով, խօսել Թիւրք պաշտօնեայի լեզուով, նոյնիսկ շողոքորթութիւններով, ուղղած ամենամեծ չարագործին: Մեզ համար ամենէն հետաքրքիրը այն „փաստական“ տեղեկութիւններն են, որոնք մտահոգութիւն կը պատճառեն նոյնիսկ Թիւրք պաշտօնեաներուն և որ մենք կը դնենք այն „քաղաքագէտների“ աչքի առաջ, որոնք մեր բողոքների մէջ ա զ գ ա յ ն ա կ ա ն նկատումներ կը տեսնեն…

Ընթերցողներու աչքէն չի պիտի վրիպի և այն էական կէտը, որ եթէ այս վիճակը կը տիրէ զուտ մահմէտական Ճիզրէ գաւառակին մէջ, ինչ դժոխային կացութեան մէջ պիտի լինին քրիստոնեայ ազգաբնակութիւն ունեցող վայրերը և մանաւանդ բացառիկ պայմանների մէջ գտնւող Հայաստանի նահանգները և հայերը: Բայց աւելի լաւ է թող փաստերը իրենք խօսեն:

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹԻՒՆ ԹԱՐԳՄԱՆՉԻ

Այս տեղեկագիրը, որ Ճիզրէի երկրագործական Պանքին հաշուապահութեան քարտուղար Մարտինցի Հիւսէյն Վէհպի էֆէնտիի կողմէն պատրաստուելով, իր ձեռքի տակ Տիգրանակերտի կուսակալութեան մատուցուած էր, յուսալի է որ այս վերջինին կողմէն ալ դրկուած ըլլայ Մեծ Եպարքոսութեան եւ այլ կեդրոնական ձեռնհաս իշխանութիւններու: Տեղեկագրին պարունակութեան ամէն մի կէտի մասին՝ թէեւ քաղաքական իշխանութեանց կողմէ իրենց ուղղուած հարցումներու եւ պահանջուած բացատրութիւններու համապատասխան պատասխան տրուած են, բայց համիտէներու հզօր պաշտպան եւ զինուորական այս կազմակերպութեան ամէն զօրութենէն տարէ տարի նիւթական օգուտներ քաղող չորրորդ բանակի ընդհանուր հրամանատար Զէքի փաշան իր կողմէն միշտ հերքումներ տուած է, եւ ասով ալ չգոհանալով զանոնք աւելի զօրացնելու աշխատած, եւ խաղաղ ու դժբախտ ժողովրդին գլխուն աւելի եւ աւելի չարիքներ տեղացնելու խրախուսած է: Եւ այդ կերպով ոչ միայն այդ կողմերուն այլ ուրիշ նահանգներու մէջ գտնւող համիտէներու ձեռքով նոյնանման եւ թերեւս աւելի սաստիկ հարստահարութիւններ եւ վայրագութիւններուն ի գործ դրուելուն, ոչխարի եւ տաւարի նման պետական գանձուն միլիոնաւոր հասոյթներուն անոնց կողմէ բռնութեամբ իւրացուելուն եւ խեղճ ազգաբնակութեանց անպատմելի միջոցներով կողոպտուելուն միակ պատճառը դարձած է:

Հարկ չկայ ըսելու թէ նոյն վայրագութեանց մեծ մասը աւելի սաստկութեամբ ի գործ կը դրուին գերութեան շղթաներով պրկուած քրիստոնեաներու, մանաւանդ հայերու նկատմամբ, որոնք տեսնելով իրենց ամէն մի ենթակայի, ամէն մի բողոքագրի անհետեւանք մնալը, մատնուած են խորին յուսահատութեան: Համոզուած ըլլալով թէ բարբարոսական այդ արարքները բնաւ հաշտելի չեն արդարութեան եւ հայրենասիրութեան ամենափոքր մի զգացման հետ, չենք կարող ըմբռնել այն շարժառիթները, որոնք ձեռնհաս իշխանութիւնները կըստիպեն այսպիսի մի խոր լռութեան: Որքան պատճառներու թելադրութեամբն է որ այս նահանգներու դժբախտ ժողովուրդները կորստեան դատապարտուած եւ պետական հասոյթներէն ալ ձեռք քաշած են: Եւրոպական պետութիւններու մօտ ալ երբէք չեն մնացած մարդասիրական զգացումներ: Մեր ամենուս յիշողութեան մէջ դեռ վառ կը մնան այն զոհողութիւնները, այն մարդասիրական ջանքերը, որոնք Նապոլէոնի ժամանակ Շամի դէպքերու առթիւ ի գործ դրուեցան: Բայց ահա հինգ տարիներէ ի վեր քրիստոնեաներուն նկատմամբ ամէն տեսակ վայրագութիւններ սանձարձակ ի գործ կը դրուին, բիւրաւորներ կոտորուեցան եւ դեռ քաղաքական պատճառներու եւ այլ պատրուակներու տակ կ'աքսորուին, կը բանտարկուին, բանտերու մէջ չարաչար կը տանջուին, շատ մը ընտանիքներ թշուառութիւններու կը մատնուին, անօթի եւ անտէր որբերու թիւերը հետզհետէ կ'աճին:

Ահա այսօր ալ Ճիզրէի պատկանող Պարկս եւ Զաղակ գիւղերու քրիստոնեաներու վրայ համիտէի Մուսթաֆա փաշան մարթինով զինեալ 5'0 ձիաւորներով յարձակելով 80 հոգիներ սպաննած եւ շատերն ալ վիրաւորած է:

Այս է մեր ներկայ վիճակը, որ ծովու կատաղի ալիքներէն բռնուած ու ղեկը կորսնցուցած նաւու մը կը նմանի: Մինչեւ երբ համբերենք:

1902 յունուար

Տիգրանակերտի կուսակալութեան Մարտին գաւառի Ճիզրէ գաւառակին ներքին վիճակին վերաբերեալ յետագայ յայտնութիւններս, — որոնք թէև մի քանի էջեր գրաւած և թերութենէ ալ զուրկ չեն, բայց յուսալով թէ նա իր ամբողջութեամբ պիտի ծառայէ Տէրութեան և Ազգին գլխէն անցնող դէպքերը պատկերացնելու և պետական անձնաւորութեանց խղճահարութիւնը և գթութիւնը արթնցնելով կորուստի մատնուած հանրային իրաւանց վրայ գթութեան աչեր դարձնելու, — թախանձանօք պիտի խնդրէի Ձեր վսեմութենէն որ ի սէր Աստուծոյ և ի հաճոյս Մարգարէին բարեհաճէիք կատարեալ համբերութեամբ սկիզբէն մինչև վերջ կարդալ:

Յ Ա Ռ Ա Ջ Ա Բ Ա Ն

Օսմանեան Պետութեան հպատակ ժողովուրդներուն իրաւանց պաշտպանութիւնը յանձնուած է հովիւներու, որոնք պատասխանատու են իրենց խնամքին յանձնուած հօտին պահպանութեան ըստ մարգարէական սրբազան հատիսի թէ „Ամէնքնիդ կը հովուէ և ով կը հովուէ հօտէն պատասխանատու է“: Բայց ցաւալի է որ Ճիզրէ գաւառին յատուկ, մասնաւոր պատճառներու գոյութեան շնորհիւ վաղուց իվեր ղրկւող տեղեկագիրներու և գրութիւններու վրայ կասկածելի աչքով կը նայուին և նոյն պատճառներով բարեկարգութիւնը կը յետաձգուի, մինչև իսկ այսօր խաղաղութիւնը այդ երկրէն անհետացած, ժողովուրդը թշուառացած, պետական գանձը փճացած ըլլայ, բայց և այնպէս ատոնք բնաւ ուշադրութեան առարկայ չեն դառնար:

Եթէ կարելի ըլլայ երևակայել թէ կը գտնուի մէկը, որ այս գաւառին մէջ անցած-դարձածները լսած չըլլայ, հոն տիրող սարսափի և հարստահարութեան հետևանօք ազգաբնակութեանց արձակած աղերսանք ու պաղատանք-

ները իր ականջին հասած չլինի, նա ալ Մարգարէին փոխանորդը և հաւատացեալներուն պետը Ն. Վեհափառութիւն սուլթանն է, որուն, ներկայ բռնապետական և օրէնքի հակառակ արարքներու մասին անգիտակցութենէն է որ ժողովուրդը կեղեքումներու և տառապանքներու մէջ կը տանջի։

Ինչպէս Ձեր վսեմութեան ալ յայտնի ըլլալու է որ ասկից տասը տարիներ առաջ մեր Օգոստափառ փատիշահին հովանոյն տակ Ճիզրէն ունէր մօտ 400 գիւղեր, հարիւր հազար խաղաղ բնակիչներով, որոնք ունէին դրամական և շարժուն հարստութիւններ, և գաղաին վարելահողերը բաղդատմամբ Տիգրանակերտի նահանգին ուրիշ վայրերու հողերուն՝ աւելի ուժեղ և աւելի արդիւնաբեր ըլլալու շնորհիւ՝ բնութեան բարիքէն օգտուող ժողովուրդը պետական գանձին տարեկան 40,000 ոսկի տուրք վճարելով հանդերձ միշտ երջանիկ, խաղաղ և հանդարտ օրեր կ'անցնէին և կ'աղօթէին փատիշահին արեւշատութեան համար, ինչ որ իրենց նուիրական և օրինական պարտականութիւնն է։ Տեղացի ժողովրդէն զատ ուրիշ տեղերէն վաճառականներ և էսնաֆներ տեղական ապրանքներ արտածելով կ'օգտուէին և իրենց հարստութիւնը կը բարդէին։

Բայց հիմայ։ Եթէ վերջին տասը տարիներէ ի վեր գաղաին շէն գիւղերէն մեծ մասը աւերակ դարձած է. պետական հասոյթները մինչև մէկ քառորդ աստիճանին նուազած է, ժողովրդական հարստութիւնը աստիճանաբար պակսելով՝ ներկայիս մէջ ժողովուրդը չքաւորութեան և թշուառութեան մատնուած է. անդորրութիւնը և հանգստութիւնը անհետացած և ճանապարհներու անապահովութեան պատճառաւ արտաքին վաճառականութեան դէմ դռները գոցուած են, ասոնք առաջ եկած են ցաւալի պատճառներէ և դեռ տիրող բռնակալութեան անհաճոյ դրութենէ մը, որոնք ներկայիս պիտի համարձակիմ պարզելու, հրաւիրելով բարձրագոյն իշխանութեանց իսրին ուշադրութիւնը և կը յանձնեմ այդ բաները անոնց խղճամիտ և գթառատ դատողութեանը։

ԿԵՆՍԱԳՐՈՒԹԻՒՆ

Ճիզրէյի Ապտի աղայի որդի Թահիր աղայի նախնիքները բնիկ Նիսէպին գաւառակին պատկանող Եունսէրի համայքէն (նահիյէ) են, որոնք ժամանակին Ճիզրէ փոխադրուելով հոն բնակութիւն կը հաստատեն և իրենց զաւակներու և թոռներու անունը Ճիզրէի մարդահամարի տետրակներու մէջ արձանագրել տուած ըլլալուն, երբ կանոնաւոր զինուորագրութեան օրէնքը կը հաստատուի, անոնք ալ զինուորական շարքերու մէջ կը ծառայեն։ Ուստի այդ հիմքերու վրայ, որոնք պաշտօնական տօմարներու և զինուորական քէտեռակներու վաւերական արձանագրութիւններով հաստատուած ճշմարտութիւններ են, պէտք է որ այս նախնիքներէն սերած Թահիր և եղբայրը Ֆաթթահ աղաները և անոնց զաւակներն ալ պետական հասարակ զինուորութեան մէջ ծառայէին. սակայն Միրանլի Մուսթաֆա փաշայի փէսայանալու շնորհիւ կը յաջողի զինուորական բարձր շրջանակները խաբելով թէ զինքը և թէ իր եղբայրը Ֆաթթահ աղան (1308) 1892 թուականին համիդիէ զօրագնդերու մէջ ընդունել տալ։ Ահա ադկէ կը սկսի իր առաջադրած նպատակին հասնելու առաջին յաջողութիւնը։

Զինուորական այդ բարձր կարգին դեռ չմտած՝ այն աստիճան թշուառ վիճակի մը մէջ կը գտնուէր որ մինչև իսկ մի քանի մարդիկներուն քով ծառայութիւններ ըրած էր։ Յետոյ ժամանակ մըն ալ տեղական կառավարութեան պաշտօնեաներու բարեսրտութեան և բարեխղճութեան շնորհիւ իրեն և իր եղբօրը Ֆաթթահ աղային իլթիզամի գործերուն մէջ պզտիկ պաշտօններ կը տրուին։ Բայց իրենց չար բնութիւնը և ստոր խառնուածքը շուտով երևան կուգայ, այնպէս որ պետական և քաղաքային (պէլէտիյէ) սնտուկներ անոնց շնորհիւ շատ մը ապառիկներով կը բեռնաւորուին։ Ատոր վրայ ժամանակ մը բանտարկուելէ վերջ՝ քաղաքապետական սնտուկին պահանջքը ապահովելու համար Ճիզրէյի փաստաբան Մէհմէտ-Ալի էֆէնտիի փոխանորդութեամբը շարժուն և անշարժ կալուածքները հաճզի տակ կ'առնուին, որոնց ամբողջին արժէքը այն ատեն միայն 2,000 ղուրուշէն մի քիչ աւելի գնահատուած ըլլալն Քաղաքապետութեան և Գործագիր ժողովներուն պաշտօնական արձանագրութիւնները կը վկայեն։

ՆԵՐԿԱՅ ՀԱՐՍՏՈՒԹԵԱՆՑ ՔԱՆԱԿԸ

Երբ նկատի ունենանք իր նախկին վիճակը և բաղդատէք իր ներկայի հարստութեան հետ, որ ի ներքոյ ցոյց պիտի տամ, խորհրդաւոր և թերևս ապշեցուցիչ պիտի գտնաք. բայց այս հարստութիւնը կազմուած են պետական գանձին և հարստահարեալ հազարաւոր մարդիկներու անթիւ իրաւունքներովը։ Ի միջի այլոց հայրը Ապտի աղայէն ժառանգած հազար ղուրուշի արժողութեամբ տան մը մօտերը և անոր դիմացը փողոցով զատուած և ալքատ մարդիկներու բնակութեան յատուկ և անոնց սեփականութիւնը եղող 8-10 տուներէն մի քանին բռնութեամբ և մացեալներն ալ իսկական արժէքին մի տասներորդի համապատասխանող չնչին գումարներով՝ իր անուան փոխանձել տալէ յետոյ՝ իրարու դէմ-դիմաց երկու պալատներ շինել տալով զբաղուած է, որոնց շինութիւնը հինգ տարիներէ իվեր դեռ չէ աւարտած, թէև անոնց համար 5,000 ոսկի ծախսած ըլլալը ամենուն յայտնի ըլլայ։ Յիշեալ պալատները կը բարձրանան Ճիզրէյի մէջտեղը, որոնց արևմտեան կողմէն կ'անցնի Պաղտատի ճամբան և արևելքէն ալ Ա. Պոլիս թէ ցամաքէն և թէ գետի վրայ ճամբորդող պետութեան քաղաքացիական և զինուորական բարձր պաշտօնեաներու և վաճառականներու անցնելիք միակ ճանապարհը, որով իւրաքանչիւր ճանապարհէն անցնողի մը աչքին առջև այդ վիթխարի շէնքերը պիտի պատկերացնեն Եգիպտոսի բրգունքները։

Ասկէ զատ մասամբ պետութեան և մասամբ ալ Մեծ-Մզկիթի (Ուլու Ճամի) վ ա գ ֆ ի ն սեփական ընդարձակ գետին մը բռնութեամբ իւրացնելով՝ իր աներ Մուսթաֆա Բաբայի հետ ընկերակցութեամբ սոյն գետնին վրայ Պէտէսթէն մը կառուցեր են, որը երկու փողոցներու իւրաքանչիւրին վրայ 20-ական խանութ ունենալով 80 խանութ կը պարունակէ, որոնց շինութեանը համար պէտք եղած քարերը և փայտերը պետական շէնքերէ և անտառներէ ձրիապէս բերել տուած է։ Դարձեալ նպարավաճառներու շուկային աջ կողմը պետութեան պատկանող պարապ գետին մը բռնութեամբ գրաւելով եղբօրը Ֆաթթան աղային հետ ընկերակցութեամբ երկու կողմին վրայ 24 խանութներ շինել տուած է, որոնց իւրաքանչիւրին շինութեան մօտաւորապէս 3,000-ական ղուրուշ ծախք հաշուենք՝ 3120 ոսկի գումարի պիտի

կարօտէր. մինչդեռ այսօր իսկական արժէքը 10,000 ոսկիի մօտ կը հաշուի: Այս խանութներուն շինութեան գործածուած քարերը ինչպիսի հնութիւններէ և ատաղձն ալ ինչ միջոցներով ձեռք անցուցած ըլլալը իր կարգին պիտի ըսենք:

Երբ՝ շինութիւնը աւարտած՝ տեսաւ թէ էսնաֆներէն այդ խանութները բռնողներ չկան, աղքատ մարդիկներուն պատկանող Մագամը-Տէպս կոչուած մէկ շուկան բռնի գոցել տալով՝ արհեստաւոր և վաճառականներուն նոյնպէս բռնութեամբ ամէն մի խանութը տարեկան 10-ական ոսկիի վարձու տալ, որով թէ աղքատ կալուածատէրերը և թէ էսնաֆը վնասներու ենթարկեց: 80 խանութներ պարունակող Պէտէսթանին շինութիւնը երբ աւարտի, վարձուոր ճարելու համար շատ յայտնի է որ ճիշդ նոյն բռնական միջոցներու պիտի դիմում ընէ: Սա ալ չմոռնամ յայտնելու թէ Մարտինցի Քարմօ-Ջատէ հաճը Ապդիւլղանի Չէլէպի և Ճիզրէյի Խօճա Հիւրմիւզի սեփականութիւնը եղող և 1,000 ոսկի արժէք ունեցող մէկ խանին երկու դռներն ալ իր նորակառոյց Պէտէսթանին կը նայէին, երբ ճարտարապետէն կ'իմանայ թէ այդ դռներուն գոյութիւնը ճարտարապետական ճաշակին և շէնքի կանոնաւորութեան հակառակ է, ադիկա բաւական եղաւ դռները անմիջապէս որմել տալով՝ խանը բոլորովին անգործածելի դարձնելու և տէրերը խոշոր վնասներու ենթարկելու:

Կ'արժէ սա կէտն ալ յիշատակել որ նորաշէն Պէտէսթէնի հարաւային և արևելեան կողմերու վրայ բացուած երկու հոյակապ և շքեղ դռներու վրայ Իրանեան պետութեան խիստ համակրութիւն մը մատնող մէյ մէկ առիւծներու պատկերներ դրուած են, որու խորհրդաւոր նշանակութիւնը խորհող միտքեր կարող են հեշտութեամբ ըմբռնել:

(Կը շարունակուի)

ՄԱՄՈՒԼԻ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԹՈՒՐՔ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆՆԵՐԸ

—

Մինչև այժմ շատ վերիվերոյ գաղափար մը միայն կազմուած է մեր մէջ սկզբունքներուն վրայ թիւրք այն տարրին, որ Եւրոպայի կողմէն ճանչուած է „Երիտասարդ Թիւրքիա" անունով: Ճանաչել այդ տարրն և իր ուղղութիւնը, նպատակն ու իր այն զգացումները, զորս կը տածէ մասնաւորապէս հայկական խնդրի նկատմամբ՝ մի շատ կարևոր և կենսական գործ է մեզ համար: Ինկատի ունիմ այս անգամ Երիտասարդ Թիւրքիոյ „Շուրայի Ումմէթ" թերթը, որ Փարիզի օսմանեան կօնգրէսին մասնակցողներուն մեծամասնութեանը պաշտօնական օրգանն է: Աւելորդ համարելով յիշատակել իր հրատարակութեան, ծաւալին ևլն մանրամասնութիւնները, բաւական է սակայն գիտնալ որ թերթի ճակատին գրուած է „Սահմանադրական կառավարութեան և ընդհանուր բարենորոգման կուսակիցներու օրգան": Այդ թերթը իր 10-րդ թւին մէջ „Հայկական համաժողով" վերնագրով խմբագրական մը հրատարակած է, որ քաղուածօրէն առաջ կը բերենք.

...„Հայ կօմիտէները,—կ'ըսէ տաճիկ սահմանադրական կուսակցութեան օրգանը—սուլթան Համիդի յոռի վարչութենէն ու տկարութենէն օգտուելով, չէին քաշուեր ազատ Հայաստան մը վերակազմելու համար ամէն տեսակ միջոցներու դիմելէ և մասնաւորապէս Ռուսիոյ հայերը յաջողած են յուլիսի 17-ի հայերու բարեկամ եւրոպացիներու անունով Պրիւսէլի մէջ համաժողով մ'ալ կազմակերպել": Համաժողովի նկարագրութիւնն ու այնտեղ առաջարկուած և ընդունուած բանաձևերն ալ դնելէ վերջ, թերթը կը շարունակէ. „Մեր կուսակցութիւնը չէ հրաժարած դիմելու այնպիսի միջոցներու, որոնք անհրաժեշտ են մեր հայրենիքի ապագային հետ առնչութիւն ունեցող այսպիսի կարևոր խնդրոյ մը մէջ: Մեր անդամներէն ոչ ոք հրաւիրուեցաւ կօնգրէսին, հետևաբար հնարաւոր չեղաւ հօն բանակցութեան մէջ օսմանեան շահերը պաշտպանել, սակայն մեր կուսակցութեան անունով Ահմէտ Րիզա պէյն իր ստորագրութեամբ մասնաւոր նամակներ ղրկած է կօնգրէսին մասնակցող անդամներէն ամէնէն կարևորներուն և այս կերպով մինչև որոշ աստիճան մը ամուլ դարձուած է այս ձեռնարկն ևս: Ղրկուած նամակներուն մեր ստացած պատասխանները, ի բաց առեալ քանի մը հատը, բոլորն ալ համամիտ են մեր ծրագրին, որ հաստատուած է ընդհանուր բարենորոգման հիման վրայ*): Այս պարագային հայկական կօնգրէսին մասնակցողներուն ամենամեծ մասը պատասխանած է այս կօնգրէսի հրաւէրին ոչ թէ այն նպատակով, որ Հայաստանի անկախութիւնը ձեռք բերեն, այլ մարդասիրական այն գաղափարով, որ ազատեն հարստահարուած մարդիկ բռնակալի մը ճիրաններէն: Բայց միթէ ա՞յս է փափագն այն կօմիտէներուն, որոնք կազմած են այս կօնգրէսը: Յաւ ի սիրտ կը խոստովանինք որ անոնք այս տեսակէտին մէջ ոչ մեզի հետ և ոչ ալ հայկական շահերուն համար մինչև Պրիւսէլ երթալու յօժարութիւնը յանձն առնող անձերուն մեծամասնութեան հետ համամիտ են: Այս կօմիտէներուն ամբողջ ցանկութիւնն է Հայաստան դարձնել այն վեց նահանգները, որոնք մեծ մասով բնակուած են քիւրդ, թիւրք, չէրքէզ և արաբ ազգաբնակութիւններով, օգտուելով Տաճկաստանի արդի տկարութենէն: Ահա այս է միակ պատճառը, որ մինչև այժմ բոլոր օսմանցիներու օգտին աշխատող օսմանցի ազատասէրները չկրցան միանալ Եւրոպայի հայ կօմիտէներուն հետ, որոնք գրեթէ ամբողջովին ռուսահայերէ կազմուած են":

„Եթէ վեց նահանգներուն մէջ գտնուած մահմէտական բնակչութիւնն առնուազն երկու անգամ աւելի չլինէր հայ բնակչութենէն և եթէ այս վեց նահանգի հայերուն ազատութիւնը կախուած չլինէր գլխաւորապէս Ռուսիոյ քաղաքականութենէն, որու լուծին տակ ևս բազմաթիւ հայեր կան, գուցէ այնատեն՝ շնորհիւ ներկայ սուլթանին սխալ քաղաքականութեան՝ հայերն հասնէին իրենց ցանկութեան:

„Բայց, ո՜վ հայ հայրենակիցներ, քանի որ „Հայաստանի" մը կազմակերպութիւնն ոչ մէկ կերպով կը համաձայնի Ռուսիոյ ներքին քաղաքականութեանն ու իր աշխարհակալական ձգտումներուն և որ Ռուսիան զինքն Արևելքի բացարձակ դատաւորը կը համարէ. քանի որ Հայաստան շինել ուզուած վեց նահանգներուն մէջ մահմէտական բնակչութիւնն ու անոր ունեցած իրաւունքները ձերիններէն քանի մը պատիկ աւելի է և քանի որ տեղին և պարագաներուն բերումը հայկական շահերն օսմանեան կառավարութեան ուժէն ու յառաջա-

*) Ղրկուած նամակներն ու ստացուած պատասխանները փրանսերէն „Մէշվէրէթ" լրագրի 132-րդ համարի մէջ տպուած են:

դիմումներէն պատշաճ մի եղանակաւ կախեալ կը թողու. այս պարագային խնդրացութի՞ւն է աշխատել որ օսմանեան կառավարութիւնը, որ հայ ժողովրդի ճշմարիտ շահերն ապահովելու ամենէն լաւ միջոցն է, չվերստանայ իր ուժը, և դուք անիրագործելի երևակայութիւններով պաշարուած Եւրոպայի թշնամութիւնը հրաւիրէք Թիւրքիոյ դէմ, որ յարգած է մինչև այժմ ձեր կրօնքը, լեզուն ու ազգութիւնը և այս կերպով դիւրացնէք Ռուսիոյ տիրապետութիւնը Անատոլիի մէջ։ Աւելի բաց խօսինք, ինչո՞ւ Ռուսիոյ հացին իւղ քսել, որ թէ ձեր և թէ մեր հասարակաց թշնամին է։ Նոյն այդ Ռուսիան չէ՞ր, որ Անատոլիի մէջ տեղի ունեցած ընդհանուր ջարդերի ժամանակ, ամէն ջանք ըրաւ պաշտպանելու համար Եըլդըզը, որ ինչպէս ձեզ ալ ծանօթ է, այդ բոլորի միակ իրական պատասխանատուն է։

„Յետոյ, երբ Պաղտատի երկաթուղիին առանձնաշնորհումը գերմաններուն տրուեցաւ, սուլթան Համիդի հետ պայմանագիր կնքուեցաւ, ձեր՝ Հայաստանի փոխակերպել ուզած վեց նահանգներու երկաթուղիներուն մենաշնորհին համար։

„Ի՞նչպէս կը լինի որ այս բոլորը չի կրնար արթնցնել ձեզի — այս բանին ոչ մէկ կերպով կրնանք խելք հասցնել։

„Այն անձերուն մէջ, որոնք կը կազմեն ձեր կոմիտէները, սրամիտ և բանիմաց մարդիկ չեն պակսիր։ Ատոնք փոխանակ փափագելու, որ ուղիղ ճամբուն բերի սուլթանը, որ միակ պատճառն է ջարդերուն և ամբողջ Թիւրքիոյ մէջ գոյութիւն ունեցող „անբնական վիճակին", անկախութեան ցնորական մտքերով կ'օրօրուին և իրենց այս ընթացքով կը վնասեն թէ ձեր ազգին և թէ ձեզի պէս և գուցէ նոյնիսկ ձեզմէ աւելի հարստահարուած ձեր թիւրք հայրենակիցներուն. իրենց այս ընթացքը մեզի լրջօրէն կը զարմացնէ ու կը վշտացնէ։ Այսպիսի ընթացք, կարծես թէ, ոչ միայն տրամաբանութեան հետ չի համաձայնիր, այլև մարդկային և ազգասիրական զգացումներու համապատասխանելէ շատ հեռի է։

„Սուլթան Աբդիւլ Համիդ կոչուած մարդկութեան այս աղէտին բարձումէն յետոյ, թիւրքերը, քիւրդերն ու հայերը, որոնք ամէնքն ալ մէկ հայրենիքի զաւակներ են, հասկնալով, թէ ինչպիսի մի էնտրիգի զոհ եղած են, պիտի գրկեն զիրար, ինչպէս անցեալին մէջ, և շատ շուտով պիտի ազատին ժամանակաւոր գժտութեան հոգեկեզ աղէտէն, որովհետև չպիտի դժուարանան հասկանալու՝ թէ այն ժամանակաւոր և մակերևութական սառնութիւնը արդիւնք է միայն մէկ անհատի քաղաքականութեան։ Սակայն դուք, ազգի փոխանորդ լինել յաւակնող յեղափոխականներ, եթէ շարունակէք այս կերպ աշխատիլ զօրաւոր մի հարուած տալու համար Թիւրքիոյ անկախութեան և անոր նիւթական ու բարոյական կեանքին, այն Թիւրքիոյ, որու յառաջադիմութեան ու փրկութեան դուք ալ նոյնչափ մասնակից պիտի լինիք, որչափ թիւրքերը, վախենք որ ահա այն ատեն այս մակերևութական ցրտութիւնն հասնելով անջնջելիութեան աստիճանին, քինոյ ու թշնամութեան զգացումներ յառաջացնէ Եւրոպայի մէջ գոյութիւն ունեցող „հակահրէական" հիւանդութեան նմանող...

„Դարձեալ կը կրկնենք, ինչպէս որ մեր թշնամին հասարակաց է, մեր շահերն ալ, մեր ապագան ալ հասարակաց են։ Այն մեր հասարակաց շահերն ապահովել, այն ապագան փայլուն տեսնել եթէ կ'ուզէք, պէտք է ամէնքս աշխատինք միասին որ բոլոր օսմանցիներու փրկութիւնն երաշխաւորող և պարփակող „հիմնական կանոնադրութիւնը" գործադրութեան դրւի և ազատինք ատոր շնորհիւ մեզ ամէնքս ալ փճացնող այս բացարձակ բռնապետութեան աղէտէն"։

ԼԻԲԱՆԱՆԻ ՆՈՐ ԿԱՌԱՎԱՐԻՉԸ

Եւրոպայի հսկողութեան տակ գտնւող Լիբանանում կառավարիչ նշանակելու հարցը վերջապէս իր լուծումն ստացաւ, բայց տարօրինակ լուծում, որ բնորոշ է մեծ պետութիւնների մէջ գոյութիւն ունեցող յարաբերութիւնների ու թիւրք դիպլօմատների բանեցրած քաղաքանութեան համար։

Ինչպէս յայտնի է Լիբանանի նախկին կառավարիչ Նաում փաշայի մահից յետոյ պետութիւնները բաժանուած էին երկու մասի. ամբողջ 3 ամիս չէին կարողանում համաձայնութեան գալ։

Մի կողմից — ասում է „Սեմաֆոր" թերթի Կ. Պոլսի թղթակիցը — գործում էր Ֆրանսիան, որին ձայնակցում էր Ռուսաստանը, միւս կողմից՝ Գերմանիան, Իտալիայի և Անգլիայի հետ միասին։ Աւստրիան անկախ դիրք էր բռնել՝ պատրաստ համակրելու երկու կուսակցութեանց թեկնածուներին միաժամանակ։

Ինչ վերաբերում է օսմանեան կառավարութեան, սա խոյս էր տալիս սեպական թեկնածու առաջարկելուց և խոհեմաբար բաւականանում էր արձանագրել այն բոլոր միմեանց յաջորդող մերժումները, որ մի կողմը ներկայացնում էր հակառակ միւսի առաջարկութեան։

Ամբողջ երկու ամիս մեծ պետութիւնների դեսպանները կամ իրենց լիազօրները շաբաթը ամենաքիչը երկու անգամ հաւաքւում էին խորհելու հաւանական և անհաւանական թեկնածուների մասին. սակայն երկու հակառակ կողմերն էլ չէին կամենում ոչ մի կերպ զիջել և խնդիրը սպառնում էր անվերջ ձգձգուել։ Թիւրքաց արտաքին գործերի նախարար Թէֆիք փաշան սուլթանից հրաման էր ստացել՝ չմասնակցել այլևս դեսպանների ժողովներին, քանի որ վերջիններս մերժած էին իրենց հաւանութեան առաջարկուած բոլոր թեկնածուներին։

Իրապէս սուլթանը շատ էլ չէր ցաւում դեսպանների ուժերը ջլատող հակառակութեանը, ընդհակառակը. ինչ փոյթ, որ Լիբանանի համար կառավարիչ չէր նշանակւում. չէ՞ որ իրօք այդ պաշտօնը „ժամանակաւորապէս" շարունակում էր կատարել նախկին փոխ նահանգապետ Նաում փաշան։ „Ժամանակաւորը" կարող էր տևել ամիսներ և տարիներ առանց թիւրքերին անհանգստացնելու։

Սակայն եւրոպական պետութիւնները սկսեցին վերջապէս զգալ այս դրութեան անյարմարութիւնը, որ սկսել էր ծաղրելի թւալ ոչ միայն տաճիկներին, այլև հասարակաց կարծիքի առաջ։ Միմեանց դէմ ինտրիգներ լարելուց յոգնած՝ դեսպանները որոշեցին փնտրել թեկնածուների մէջ մի այնպիսին, որը [illegible]ղ չյարուցանէր և որը չհակւէր Լիբանանում շահ ունեցող պետութիւններից ոչ մէկի կողմը։ Այս պայմաններում էր, որ Լիբանանի կառավարիչ ընտրւեց կայսերական ախոռների վերատեսուչ, դիվիզիոնի ժեներալ Մուզաֆֆէր փաշան (կոմս Զայկօվսկի)։

Մուզաֆֆէր փաշան օրինակելի տիպար է այն բարձրաստիճան բախտախնդիրների, որոնք մեծ դեր են խա-

ղում արևելքի քաղաքական ասպարէզում։ 19-րդ դարի առաջին կիսամեակում նրա հայրը ռուսական Լեհաստանից գաղթելով Տաճկաստան՝ այստեղ ընդունեց մահմէտականութիւն և ստանալով դիվիզիոնի ժենեռալի պաշտօն՝ հունգարացի լեհ փախստականներից և դօրբուչա կօզակների ժառանգներից կազմակերպեց օսմանեան կօզակների երկու գունդ։ Նորից յարաբերութեան մէջ մտնելով ռուս կառավարութեան հետ՝ Ղրիմի պատերազմի ժամանակ նա կրկին քրիստոնէութիւն ընդունեց և մեծ որդու հետ վերադառնալով Վարշաւա՝ յետ ստացաւ յարքունիս գրաւած կալուածքները։

Զայկօվսկու կրտսեր որդին՝ Մուզաֆֆէրը մնաց Պոլսում, զինուորական կրթութիւն ստացաւ ֆրանսիացի Սէնսէրի դպրոցում ու պաշտօնեայ նշանակուեց Աբդիւլ Ազիզի պահակախմբում։

1877-78-ի պատերազմի ժամանակ նա մասնակցում էր իբր հեծելազօրքի հազարապետ՝ Մէհմէտ Ալի փաշայի բանակում։ Պատերազմից յետոյ մասամբ շնորհիւ իր պերմանասէր ուղղութեան և Ֆոն դեր Հոլց փաշայի բարեկամութեան՝ նա ժենեռալի տիտղոս ստացաւ և կայսերական ախոռների վերատեսուչ նշանակուեցաւ։

Սուլթանը Մուզաֆֆէր փաշային միշտ լաւ աչքով էր նայում. սա իր քաղցրաբարոյ անհատական յատկութիւնների հետ միասին՝ երբէք չէ ունեցած բնաւորութեան անկախութիւն, ոչինչ չի գործած և ոչ մի խօսք չի արտասանած, որը կարող լինէր չգուր գալ իր տիրոջը։ Այս բանի պերճախօս ապացոյցն է այն հռչակած խառն յանձնաժողովը, որը նշանակուեց սուլթանի կողմից՝ կոտորածների պատասխանատուներին գտնելու և նրանց պատժելու նպատակով։

Պալատի պաշտօնեաների հետ միասին — ինչպիսին է Իզզէտ բէյ (այժմ Իզզէտ փաշայ) կամ Բ. Դուռը, որոնք նպատակ ունէին մեղաւոր ցուցնել հայերին — յանձնաժողովին մասնակցում էին նաև տաճկաց ծառայութեան մէջ գտնուող եւրօպացիներ՝ գերմանացի ինստրուկտօր Կամպհովներ, Վիտալիս և Լէկոկ փաշաները, ինչպէս և տաճկահպատակ եւրօպացիներ ու Մուզաֆֆէր փաշան։

Մինչդեռ Վիտալիս փաշան հրաժարւում էր մասնակցել յանձնաժողովին ու Կամպհովները և Լէկոկ փաշաները պահանջելով, որ քննութիւնը իսկական և լուրջ լինէր՝ այդ առիթով Իզզէտ բէյի հետ կատաղի վէճեր էին ունենում առանց նայելու որ դա պալատին դուր կը գայ թէ ոչ՝ Մուզաֆֆէր փաշան „էվէտ էֆէնդիմ“ էր պատասխանում տիրոջ պատգամատու Իզզէտ բէյի ամէն մի ասածին։ Եթէ Կամպհովների ու Լէկոկի պնդումների հիման վրայ յանձնաժողովը օրէցօր չյետաձգէր իր նիստերը ու վերջացներ փակելով իր գործունէութիւնը, եթէ նա ընդունէր այն որոշումը, որի համար գումարուած էր, այսինքն եթէ յայտարարէր թէ հայերն էին քրդերին վնասողները — Մուզաֆֆէրը անշուշտ ստորագրելու էր այդ որոշումը երկու ձեռքով... Հասկանալի է, որ Եըլդըզում ոչ մի առիթ չունէին դժգոհ լինելու Մուզաֆֆէրի ընտրութիւնից, ուստի և դեսպանների կայացրած վճիռը՝ հաստատուեցաւ սուլթանի կողմից։

Այս անգամ ևս մեծ պետութիւնների „հսկողութիւնը Լիբանանի վրայ“ դարձաւ կօմեդիա։ Հակառակ տեղական ազգաբնակութեան և Եւրօպայի շահերի՝ նրան կառավարիչ նշանակուեց մէկը, որի բոլոր արժանաւորութիւնը ոչ մի արժանաւորութիւն չունենալու մէջն է կայանում։

ՓՈՔՐԻԿ ԴԱՍ ԹԻՒՐՔԻԱՅԻՆ

Թիւրքիան ստացաւ մի խրատական դաս Իտալիայի կողմից։ Վերջինս, ինչպէս յայտնի է, Կարմիր ծովի հարաւարևմտեան ափերում ունի բաւականին մեծ գաղութ, Էրիթրէ անունով։ Էրիթրէի իտալահպատակ եւրօպացի վաճառականները, բացի Հաբէշստանի և Ափրիկէի խորքերից, խոշոր վաճառականական յարաբերութիւններ ունին և Կարմիր ծովի արևելեան ափի հետ, որը կազմում է Թիւրքիայի Եմէնի կուսակալութեան մի մասը։

Սակայն, ինչպէս Թիւրքիայի միւս վայրերում, խաղաղութիւնը անկարող է գոյութիւն ունենալ և Եմէնի ափերում։ Այս անգամ Թիւրքիայի ծովասպատակներն էին, որ գործում էին Կարմիր ծովի վրայ և հանգիստ չէին տալիս իտալահպատակ նաւավարներին։

Եւ ինչպէս միշտ, Թիւրքիան ինքը անընդունակ էր, կամ չէր կամենում ոչինչ անել։

Եւ ինչպէս միշտ, Թիւրքիայի վրայ ազդեց, նրան սթափեցրեց միակ միջոցը — բռնի ուժը։

Օգտուելով աւազակութեան մի սովորական դէպքից, երբ ծովասպատակները պատսպարւել էին Միդդիի կղզիի վրայ, իսկ Հօդէիդայի թիւրք կառավարիչը հրաժարւում էր յանձնել աւազակներին, իտալական „Պիէմոնտ“ զրահաւորը դիմում է կտրուկ ճանապարհի՝ ռմբակոծում է Միդդի կղզին, պատժում մեղաւորներին, և պահանջում սուլթանի կառավարութիւնից կատարել իր պահանջները՝ ոչնչացնել ծովասպատակների բոլոր առապատաւոր մակոյկները, վճարել 40 հազար ֆրանք յօգուտ երկու սպանուած իտալացիների ընտանիքների և վնասուածէ բրիթրէհպատակների, ճանաչել էրիթրէհպատակ նաւավարների արտօնեալ դրութիւնը, ինչպէս դա արուած է միւս եւրօպահպատակների վերաբերմամբ։

Թիւրքիան, առանց ծպտուն հանելու, կատարում է Իտալիայի բոլոր պահանջները։

ՌՈՒՍԱՅ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄԸ

Ռուսաց յեղափոխական շարժումը նոր չէ, նա ունի իր պատկառելի անցեալը, բազմաթիւ նահատակների արիւնով սրբազործուած երկար պատմութիւնը։ Մեր նպատակից դուրս է երկարօրէն կանգ առնել այդ անցեալի վրայ, մենք կ'աշխատենք միմիայն ընդհանուր գծերով ցոյց տալ այն մեծ յառաջադիմութիւնը, որ արել է ռուս յեղափոխական շարժումը վերջին 20-25 տարուայ մէջ և մասնաւորապէս անել այն բնորոշ, աչքի ընկնող գծերի վրայ, որ ներկայումս նկատելի են այդ շարժման ընթացքի մէջ։

I

Ռուսաց յեղափոխական շարժման ամենագլխաւոր եւ միութարական կողմն այն է, որ նա այլևս չի սահմանափակւում նեղ, ինտելիգենտ շրջաններում, որոնք շփւում էին գրեթէ բացառապէս բանւոր դասակարգի հետ, այն էլ շատ քիչ չափով։ Սրանից 20 տարի առաջ „նարոդնայա վոլեա“-ն, որ առաջին անգամ յեղափոխական շարժմանը տուեց քաղաքական կուսի բնաւորութիւն՝ երազել անգամ չէր կարող, որ յեղափոխական գործը կունենայ այնպիսի ժողովրդականութիւն, որպիսին ունի այժմ։ Այո, այն ժամանակ այդ գործով հետաքրքրւում էին գլխաւորապէս ուսանողները եւ բանւորները, այն երկու դասակարգերը, որոնք ամէն տեղ ու ամէն երկրում կազմում են յեղափոխական գործի աւանգարդը։ Իզուր չեն սովորեցնում նորակոչ ռուս զինուորներին թէ „արտաքին թշնամիներն են՝ թիւրքը, գերմանացին, անգլիացին, իսկ ներքին թշնամիները՝ ուսանողներն ու բանւորները“։ Երկրագործ դասակարգը Ռուսաստանում, որ կազմում է երկրի ազգաբնակութեան ճնշող մեծամասնութիւնը, եղել է անտարբեր, իսկ երբեմն էլ ընդդէմ յեղափոխութեան։ Քիչ

չեն այնպիսի փասպեր, երբ գիւղացիները կամովին կատարում էին ժանդարմի դերը, իսկ երբեմն իրենց ձեռքով նոյնիսկ ուզում էին պատժել սոցիալիստներին:

Սակայն ժամանակը փոխւած է երեւում: Այժմ այդ անխօսանալեզու հպատակներն էլ կամաց-կամաց սկսում են մտածել, քննել իրերի դրութիւնը եւ գալիս են այն եզրակացութեան, որ իրենց ամենամեծ թշնամին կառավարութեան ներկայ միապետական բէժիմն է: Իհարկէ ռուս ժողովուրդի աչքաբաց մասը յանկարծակի չհասաւ այդ եզրակացութեան: Մի կողմից ժողովրդի տարէց տարի աճող աղքատութիւնը, միւս կողմից յեղափոխական մարմինների յորդորանքները եւ վերջապէս իր, կառավարութեան գործածած սանձարձակ բռնակալական միջոցները, բոլորը միասին նպաստեցին ռուս ժողովրդի հասունանալուն:

Շնորհիւ ժողովրդի տգիտութեան, մեստեսակ գիւղատնտեսական միջոցների ու գլխաւորապէս հաւոր դասակարգի վրայ ծնունդ առնող տուրքերի, ժողովուրդը Ռուսաստանում տնտեսապէս ոչ միայն չի առաջադիմում, այլ ընդհակառակը ամէն տարի միլիոնաւոր ընտանիքներ ենթակայ են սովի եւ իբրեւ հետեւանք դրա — տնտեսական քայքայման:

Նրանք զրկւում են հողից, դիմում դէպի քաղաքները, լցնում այն ըմբոստների շարքերը, որոնք թափառում են Ռուսաստանի ամբողջ տարածութեան վրայ՝ հիւսիսից հարաւ, արեւմուտքից արեւելք... Քաղաքային արդիւնաբերական կեանքը այն չափով չի զարգանում, որպէս զի կլանէ այդ հողից զրկւող տարրը, աշխատանքի գինը ընկնում է, դժգոհների թիւը աւելանում, պատրաստւում է պարարտ հող իշխող վարչութեան դէմ դաւադրողների համար:

Այդ ամէնի վրայ աւելանում է եւ այն դժգոհութիւնը, որ բնական հետեւանք է խղճի ազատութեան բացակայութեան:

Դեռ XI դարից սկսած, յենւելով միապետութեան վրայ, օրթոդոքս եկեղեցին հալածում, խեղդում է ամէն մի այլ կրօնական դաւանանք, ազատ միտք, ազատ ձգտում, որ երեւացել է Ռուսաստանում՝ վերջին 900 տարւայ ընթացքում:

Չնայած այն հալածանքներին ու տանջանքներին, որ կրել են ռուս բողոքող աղանդաւորները սկսած սուրբն Վլատիմիրից մինչեւ մեր օրերը, աղանդները աճում են, աղանդաւորների թիւը տարէց տարի ստւարանում է, նրանց թիւը այսօր հասնում է 7-10 միլիոնի: Դա բաւական չէ, տէրութեան կողմից ձեռք առնւած խիստ միջոցները ունեցան այն հետեւանքը, որ կրօնական հողից աղանդաւորների մի մասը սկսեցին կամաց կամաց հակիւ դէպի քաղաքականը:

Այդ աւելի բացիօնալիստ, կիսաքաղաքական աղանդների մէջ աչքի են ընկնում՝ շտունդիստները կամ բապդիստները: Սկզբում՝ շտունդիստները չէին շօշափում՝ հասարակական կեանքի քաղաքական կողմերը: „Չկայ իշխանութիւն, եթէ նա Աստուածանից չէ“ քարոզում էին այդ վարդապետութեան ուսուցիչները, բայց միեւնոյն ժամանակ նրանք գտնում էին, որ պէտք է հպատակւել եղած կարգ ու կանոնին: Նոր վարդապետութեան ամենագլխաւոր նպատակն էր տարածել աւետարանը Ռուսաստանում, կամ ինչպէս իրենք էին ասում՝ „քարի խօսքն աւետել“ երկրին: Եւ իսկապէս դրանց շնորհիւն է, որ Ռուսաստանի զանազան խուլ անկիւններում տարածւած են այսօր բազմաթիւ քանակութեամբ Հին եւ Նոր Կտակարաններ:

Նոր վարդապետութեան հետեւողները շարունակ միասին հաւաքւած կարդում էին աւետարանը, համեմատում՝ ուղղափառ եկեղեցու կարգերի հետ եւ գտնում՝ որ գոյութիւն ունեցող պաշտօնական եկեղեցու սպասաւորները չեն գնում աւետարանի ցոյց տւած ճանապարհով, չեն իւրացրել նրա բարոյական մտքերը: Մի կողմից ուղղափառ եկեղեցու հոգեւորականութեան ընկած վարք ու բարքը, միւս կողմից զերմանացի բողոքականների կենդանի օրինակը պատճառ դարձան, որ այս նոր վարդապետութիւնը հարաւային Ռուսաստանում տարածւեց շատ զգալի չափով: Շտունդիստների գլխաւորները աշխատում էին կապել, միացնել „հաւատացեալներին“ եւ մի ընդհանուր մեծ համայնք ստեղծել: Բայց նրանք չհասան իրենց նպատակին: Միայն 4 տարի էր, ինչ ծնունդ էր առել շտունդիզմը, երբ նրա մէջ առաջացաւ մի նոր հաւատ:

Բապդիզմի պրօպագանդիստները մտնելով գիւղերը քարոզում էին, թէ բոլոր մարդիկ հաւասար են, առանց ուշադրութեան առնելու նորահաւատների դասակարգը եւ տնտեսական դրութիւնը: Քարոզիչներին միանում էին ամէն դասակարգի մարդիկ՝ արհեստաւոր, գիւղացի, կալւածատէր եւ նոյնիսկ հարուստ վաճառական: Հարուստ բապդիստները թէպէտ աւելի մարդասէր էին քան առաջ, բայց եւ այնպէս մնում էին առաջւայ հարուստները եւ շարունակում հարստահարել իրենց աղքատ բապդիստ „եղբայրներին“: Վերջիններս դժգոհ էին եւ բողոքում էին այդ „անարդարութեան“ դէմ: Աղանդաւորների մէջ առաջ եկաւ հաւատած՝ հարուստները ջոկւեցին կոչւելով „հին շտունդիստներ“, իսկ միւսները կոչւեցին „նոր շտունդիստներ“ կամ „բապդիստներ: Այս վերջին աղանդը, որ ամենատարածւածն է, աւելի առողջ է մտքերով եւ աւելի յեղափոխական:

Նոր շտունդիստները բացասական կերպով են վերաբերւում դէպի իշխանութիւնը — գրում է այդ աղանդը ուսումնասիրողներից մէկը եւ իբրեւ փաստ առաջ է բերում այն մտքերը, որ լսել է աղանդաւորներից — „ուղղափառ իշխանութիւնները, որոնք խաչեր են կրում իբրեւ պարգեւ, անիծւած են: Նրանք կենդանի կուռքեր են, իսկ նրանց հպատակողները — կռապաշտներ: Նրանց իշխանութիւնը բռնութիւն է, որովհետեւ իշխանութիւն ունին նրանք, որոնք միւսներից հարուստ են եւ ուժեղ: Ոչ մի իշխանութիւն, ոչ մի պատիժ, ոչ մի քանտ... աշխարհիս վրայ չպէտք է լինի մի այլ իշխանութիւն, բացի աստուածայինը“: Մէկ շտունդիստ — շարունակում է հետազօտողը,—խօսելով ուղղափառների մասին՝ ասում էր. „Այդ թագաւորը չի լինի, բայց կը լինեն թագաւորներ ժողովրդի ընտրութեամբ, ում ընկաւ վիճակը, նա կը լինի թագաւոր: Այն բոլոր ոսկին, որ այժմ գնում է թագաւորական տան վրայ, մեր ձեռքում կը լինի“... Բացատրելով Երեմիա Մարգարէի գլխի XIII գլխի 18-21 էջերը, նրանք ասում են. „այստեղ պարզ ասւած է, որ կը գայ մի Օր, երբ ուղղափառ թագաւորների գլխից կ՚ընկնի թագը: Նրանք կը խոնարհւեն եւ աւելի ցած կ՚իջնեն, այսինքն կ՚ոչնչանայ նրանց կոչումը“...

Աղանդաւորները համոզւած են - գրում է պաշտօնական ուսումնասիրողներից մէկը,— որ մի օր իրենք կը խլեն կալւածատէրերից հողը եւ հաւասար կերպով կը բաժանեն ամէնքի վրայ: Ամէն բան ընդհանրական կը լինի, բոլոր իրաւունքները իրենց ապրանքներով բաց կը լինեն ամէնքի առաջ վերցրու առանց վճարելու: Յիսուս Քրիստոս տանջւեց ամբողջ մարդկութեան համար, ուրեմն նրա սէրը դէպի ամէնքը միատեսակ է, ուստի աշխարհիս բարիքն էլ պէտք է բաժանւած լինի մարդկանց մէջ հաւասար կերպով: Քրիստոս մեր հայրն է. նրա որդիքը պէտք է հաւասար լինեն: Մարդիկ պէտք է ապրեն ջոկ ջոկ եղբայրութեամբ. աշխատանքը պէտք է ընդհանուր լինի, իրերի փոխանակութիւնը պտղով. փողը չպէտք է գոյութիւն ունենայ, ամէն բան պէտք է կատարւի փոխադարձ համաձայնութեամբ եւ եղբայրաբար: Քահանաներն կռապաշտական հաւատ են քարոզում, մենք այդ հաւատը մերժում ենք, իսկ մեր հաւատը կը լինի ազատութիւն, հաւասարութիւն եւ եղբայրութիւն“:

Ընդհանրապէս կարելի է ասել,— աւելացնում է հետազօտողը,— որ նոր-շտանդիզմի մէջ մեծ ձգտում է նկատւում իւրացնել արեւմտեան եւրոպական գաղափարները եւ կարգերը: „Արտասահմանում, ասում են շտանդիստները, մարդիկ մեզանից խելօք են, ուստի մենք պէտք է նրանց լենք, քան մեր սինոդին“:

Նոյնը պիտի ասել եւ Ռուսաստանի այլ բացիօնալիստ աղանդաւորների մասին: Նրանք ամէնքն էլ՝ թէեւ շաղախւած „աւետարանական“ մտքերով դժգոհ են ներկայ կրօնական ու մարմնաւոր իշխանութիւններից եւ ձգտում են ստեղծել նորը, աւելի արդարը, աւելի ճշմարիտը:

Ահա ինչու, երբ քաղաքական շարժման կողմնակիցները բանւորական շարժումներից դուրս սկսեցին պրօպագանդ անել եւ գիւղերում, համեմատաբար աւելի յաջողութիւն նրանք գտան աղանդաւորների մէջ: Եւ յիրաւի, այս տարւայ ժողովրդական շարժումները տեղի ունեցան գլխաւորապէս Ռուսաստանի հարաւային նահանգներում, ուր աղանդաւորները եւ մասնաւորապէս շտունդիստները թւով համեմատաբար շատ են:

(Կը շարունակւի)

ՎԵՐՋԻՆ ԼՈՒՐԵՐ

ՆԱՄԱԿ ՌՈՒՍ-ՏԱՃԿԱԿԱՆ ՍԱՀՄԱՆԱԳԼԽԻՑ

13 Հոկտեմբեր

Գաղթականների դրութիւնը մնում է ծանր և անորոշ՝ շնորհիւ կովկասեան կառավարչապետի անիրաւ ու հակասական կարգադրութիւնների:

Ինչպէս յայտնի է՝ սկզբում առաջնորդարան չգրւող գաղթականներին ճանապարհ ցոյց տրւեց դէպի երկիր: Գաղթականների հոսանքը ուղղւեց դէպի Ալ և Նախիջեւան մեծ ծաւալ ստացաւ, որ բոլորովին անսպասելի էր կառավարութեան համար: Գաղթականների թիւը հասաւ հազարների և օր աւուր ստւարանում էր: Նրանցից շատերը չքաւորներ էին՝ ոտաբոբիկ, օրական հացի կարօտ: Օգնութիւն էր պէտք: Ամէն կողմից սկսեց դրամական նպաստներ տեղալ Կարսի յաջորդի մօտ և „Մշակ“ի խմբագրատան մէջ: Խմբերով շրջող խառնիճաղանճ գաղթա-

կանները ծանր յիշողութիւններ էին արթնացնում և սրտի կսկիծ առաջացնում։

Բասենի գիւղերում գաղթականները բաժանուեցին տների վրայ, ծախսի խնայողութիւն անելու համար։ Ամբողջ մէկ ու կէս ամիս, ամենայն համբերողութեամբ, հազար ու մի զրկանքներ կրելով, Բասենի հայ ժողովուրդը անտրտունջ տարաւ այդ ահագին բեռը այն յուսով, թէ վերջապէս հասել է ժամը խեղճ, տարագիր գաղթականներին հայրենի օճախի տակ հանգիստ վայելելու, բայց աւա՜ղ... Ցաճիկ կառավարութիւնից ո՛չ պակաս անխիղճ կովկասեան ռուս վարչութիւնը սահմանի վրայ պաշտօնապէս արգիլեց նրանց՝ առաջ խաղալ և ցոյց տուեց նրանց Պարսկաստանի ճանապարհը... Գաղթականների հոսանքը շարժուեց դէպի Արարատեան նահանգը, այնտեղից Պարսկաստան անցնելու համար, Բայց հազիւ Կաղզւանի մօտերքն էին հասել խեղճերը։ երբ ռուս „ստրաժնիկները“ (պահապանները) շրջապատելով յետ դարձրին նրանց դէպի Կարս։

Եւ այսպէս երկու ամբողջ ամիս գաղթականներին մի տեղից միւս տեղ քաշքշելուց յետոյ, այսօր բոլորին հաւաքել են քաղաքը և ստիպում են, որ բոլորն էլ ռուսահպատակ գրուին։ Գաղթականները նորից մերժում են և առ այժմս մեծամասնութիւնը ցրուել է Շիրակի գիւղերը ու ծանրացել գիւղացիների վրայ. մի փոքրիկ մասը վերադարձել է իր նախկին տեղը և մի բաւականին խոշոր թիւն էլ քաղաքումը սպասում է, թէ ինչո՞ւ համար, ոչ ոք չգիտէ։

Թէ գիւղերում և թէ քաղաքում անորոշութեան մէջ գտնուող գաղթականների շնորհիւ ստեղծուել է շատ ծանր դրութիւն։ Ցանցանքները շատանում են և վախ կայ, որ շատերը տրուեն ձրիակերութեան, դիմեն խաչագողական ճանապարհների։

Վերադարձող գաղթականների հոսանքը սահմանում բաւականին զոհեր տուեց. տասը հոգի փախչելու փորձ են արել, որոնցից հնգի սպանուած դիակները գտել են ռուսական սահմանում, իսկ միւս հինգը անցել, բայց բռնուել են և այժմս տաճկաց բանտերումն են։ Բացի դրանցից, երկու հոգի մեռել են հիւանդութիւնից և մի հոգի էլ ֆուրգոնից վայր է գլորուել և մեռել։ Մեռնող երեխաների թիւը տասնեակներով են հաշուում։

ՆԱՄԱԿ ՊԱՐՍԿԱ-ՏԱՃԿԱԿԱՆ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԻ

Նոր լուրեր են պտտում թէ սուլթանը կարգադրել է բանտարկեալների համար մի նոր տեսակի կոտորած՝ նրանց պէտք է մեռցնեն բանտերում։

Բայազիտում կախաղան բարձրացրած Խաչատուր վարժապետի և Հայդուկ Աւետիս Ցարոյի հետ, ինչպէս ասում են, կախուած է և մի քիւրդ՝ յեղափոխականներին օգնած լինելու պատճառով։ Նոյն տեղում զինուորականները փախցրել են Ֆ հայ աղջիկ, որից քաղաքում մեծ յուզում է առաջացել։ Սուլթանական նոր իրատէն յայտնում է գաւառապետներին՝ ոչէ մի տեղ երկու անձերի վկայութեամբ հաստատուած յեղափոխականներին կախել առանց երկար-բարակ հարցաքննութեան։

Սահմանի վրայ աւելացել են թիւրք զօրքեր։ Արտասահմանի թիւրք հիւպատոսները անդադար հեռագիրներ են տալիս յեղափոխականների շարժումների (՞) մասին։ Կասկածում են, որ նոր գաղթականութիւններ պիտի հաստատուին մեր սահմանի վրայ։ Այդ մասին յատկապէս հայերը դիմել են շահին. վերջինս ընդունել է։ Թիւրքերը կասկածում են, թէ դրանք բոլորն էլ յեղափոխականներ են։

ՄԱՀԻԱՆ ՊԱՏԻԺ

Հ. Յ. Դաշնակցութեան Արևմտեան Բիւրօի 1896 թուականի և վերջերս Կ. Պոլսոյ Պատասխանատու Կեդր. Կոմիտէի վճռի համաձայն՝ ապրիլի 10-ին Բաթում քաղաքում տեռորի ենթարկուեց Երզնկայի Էրկան գիւղացի, 28 տարեկան, սափրիչ Մելքոն Քէօսեան, որը 1896 թ. իվեր Դաշնակցութեան պատկանող 10 հրացաններ իւրացրել և անյայտացել էր։ Ահաբեկիչները ազատ են։

ՆԻՒՐԱՏԻՊԱՐԹԻՆ

ԱՐԵՒՄՏԵԱՆ ԲԻՒՐՕՆ ստացած է՝

ԲՈՒԷՐԵՇՏԻ նորակազմ „Անդրանիկ“ խմբից (Խմօի միջոցաւ) 20 ֆրանք, հանգանակուած հետեւեալ կերպով՝ Շամիրամ 5 ֆր., Խմօ 2, Թոչուն, Հայկազ, Կանդիտան, Ղարաբաղցի Խեչօ, Սրմբատ, Առիւծ, Մլաս, Աւօ, Զաքանեան, տիկին Աշխէն, տիկին Աղաւնի մէկ-ական, Լեանցի 1. 40, Սերոբ 0. 60 ֆրանք։

ՌՈՒՇԶՈՒԿԻՑ (Վարդօի միջոցաւ № 25-ով հանգանակուած) 580 արծաթ լէվ, հետեւեալ անձերից՝ Բ. Ոմն 100 արծաթ լէվ, թիւ 4՝ 100, թիւ 1000՝ 50, Աղաւնի 50, Ա... 40, թիւ 3՝ 40, Գ. Ն. 20, թիւ 20՝ 20, Անծ, Ոմն, թիւ 123, Արծիւ, թիւ 31 10-ական, Ասլան 6, Լազ, Պլէճ, թիւ 10,՝ Պ. Գրիգորեան, Պ. Վարդանեան, Ոմն, Դաբրիէլեան Փափազ, թիւ 55, Բազէ 5-ական, Ոմն, Ստեփան Գ., Պետրոս, Վաղարշակ Բ. 3-ական, Արեւ, թիւ 60, Յ. Թէրզեան, թիւ 2, Ոմն 2-ական, թիւ 36՝ 1, Ռուսչուկի դաշնակցական „Սերոբ“ խմբից 30 արծաթ լէվ։

ԳԱՀԻՐԷԻՑ (Կար. Այվ-ից) 23 ֆր., Յորդանեանից (Սուրբայա, ճաւա կղզի) 20 ֆր., ՇՈՒՇՈՒՑ՝ (օր. Թ.-ի միջոցով) ի նպաստ „Պրօ Արմէնիայի“ 27 ֆր., Ամերիկայի ԲՕՍՏՕՆԻ ինքնապաշտ. Յանձնախմբից 10 անգլ. ոսկի 4 շիլլին 1 պ., երկրի որոշ վայրը հասցնելու համար։

Ընդհանուր գումար 926 ֆրանք։

ՆԱԻԱՀԱՆԳՍՑԻ Կեդր. Կոմիտէն՝

Բ. „Կայծակ“ խ. 61 ռուբլի, „Արշաւիր“ խ. 50, „Վարազդատ“ խ. 30, „Դազան Տարօնեցի“ խ. 40, „Խաչալեռ“ խ. 30, „Առիւծ“ խ. 14, վտանգւած մի ընկերոջ 20, „Արծիւ“ խ. 7. 20, „Բիւրակն“ խ. 13, „Արարատ“ խ. 20. 30, „Խիկար“ խ. 9, „Ռուբինեանց“ խ. 10, „Զինուոր“ խ. 15, „Ծովասար“ խ. 16. 50, „Արմատ“ խ. 25, Գաղթավայրի „Եգիպտացի“ խմբի 1902 թուի բ. քառամսեայ անդամավճար 18. 75, Արծաթ Ջուր գիւղի „Սերոբ“ խմբից 6 ռուբլի։ Գումար 385 ռուբլի 45 կոպէկ։

ՊԱՐՍԿԱՍՏԱՆ՝

Թ. քաղաքում հանգանակուած է յօգուտ „Դրօշակ“ի.—նահատակների յիշատակին 50, ղրան, Բանասէր 25, Սերոբ-Աղբիւրի յիշատակին 15, Ջհան 15, Ցոյս 15, Դ. Շ. 20, Մ. Խարբերդցի 15, Ոմն 20, Ոմն Վ. 10, Մ. Մինասեանց 30, Ապրօ 50, Փարոս 10, Ա՛խ երանի 15, Պ. Պետրոսեան 10, Ոմն 5, Բաֆֆիի յիշատակին 60, Ոմն Մ. 10, Թաղէոս 20, Խենթ 5, Միքայէլեան 10, Արամ 5 ղրան։ Գումար 415 ղրան։

ՐՈՒՄԱՆԻԱ՝

ԴԱՆՈՒԲ ենթակոմիտէէն սեպտ.--հոկտ հանգանակուած՝ „Վարազ“ խ. 36 ֆրանք, „Կարին“ խ. 28, „Հազուլ“ խ. 36, „Նոր-Դար“ խ. 36, „Սերոբ-Աղբիւր“ խ. 35, „Զինասէր“ խ. 33, „Սեհպուհ“ խ. 24. 60, „Թէղայի խ. 42. 30, „Տրդատ“ խ. 20. 25, „Տարօն“ խ. 18, Յ. Պրահիլայի „Առիւծ“ խ. 56, պատկերէ մը 1, հատակրողէ մը Ա. Տեմ. 5 ֆր.։ Գումար 371 ֆրանք 15 սանթիմ։

Խմբագրութեանս դիմել հետեւեալ հասցէով՝

Rédaction du „Droschak“, Genève (Suisse)